Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

562
2752
2752

ա/1996

ԳՐԱԴԱՐԱՆ
ՓԱՐԼԱՄԵՆՏԻ

ՓԱՐԼԱՄԵՆՏԻ

1999

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ՀԱՅՈՑ

### ՄԽԻԹԱՐԱՅ ԱՅՐԻՎԱՆԵՑՒՈՅ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵԱՑ

### ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆ

ԾԱԽԻՒՔ ՆԵՐՔԻՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՍԵՆԵԿԱՊԵՏԻ ԵՒ ԱՍՊԵՏԻ

### ԽԱՉԱՏՐՈՅ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԼԱԶԱՐԵՎԻ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՀԱԿՈԲ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

562

ՄՈՍԿՎԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ

1860

На основаніи разрѣшенія Статскаго Совѣтника Бероева, печатать позволяется. Санктпетербургъ, 8 Октября 1858 года.

*Ценсоръ Палаузовъ.*

562

Ա.Թ. 558

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՀՕԳԱԲԱՐՁՈՒ

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ

ՍԵՆԵԿԱՊԵՏԻ ԵՒ ԱՍՊԵՏԻ

# ՅՈՎՀԱՆՆՈՒ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

# ԼԱԶԱՐԵՎԻ

ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
Арм. ССР

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ՀԱՅՈՑ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՀԱԿՈԲ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

Շնորհաւք և զաւրութեամբ համագոյ Սուրբ Երրորդութեանն
Նախերգան Նոր Պատմութեանս՝ արտասանեալ 'ի տէր Միխիթար վարդապետէ
Այրիվանեցւոյ:

—

Հայր և Որդի և Հոգի Սուրբ՝ անեղ համագոյ և համազաւր, անսկիզբն և անվախճան, յանէից և յոչընչից արարիչ համայնից եղելոց և աներևութից, կարգաւորիչ և խնամիչ ամենայն եղելոց, ողորմած և քաղցր առ ամենեսեան. քեզ փառք և աւրհնութիւն, գոհութիւն և բարեբանութիւն յամենայն արարածոց քոց 'ի բարութեանց քոց, 'ի մեծութեանց քոց, յառատութեանց քոց, 'ի գթութեանց քոց, 'ի թիւս անթիւս ստեղծուածոց քոց՝ յերկս յաւիտեանս և յանբաւ յաւիտենից:

—

Հոգւովն Աստուծոյ լցեալ և իմաստնացեալ սուրբն Մովսէս, ընդ որում խաւսեցաւ Տէր երեսաւք և ոչ աւրինակաւք՝ ձևացուցանելով առաջի լուսաւոր մտաց նորա զ'ի

սկզբանէ լինելութիւն ամենայն արարածոց իւրոց՝ որպէս երբեմն զքանչելատեսիլ մարգարէին Եզեկիելի ձեւացուցանէր, ձողաչափելով զշինուածս տաճարին և զտեղի փառաց արքունական աթոռոյն և զօծումն սրբալոյս իւղով զքանչելահրաշ քաղաքին, — այսպէս ըստ այսմ տարասի և առաջին խորհրդագրած տեսանողին ասէր. «Տեսջիր, արասցես զամենայն ըստ օրինակին, որ ցուցաւ քեզ 'ի լերինն», — իսկ նա՝ խնամանացնեալ հոգւովն՝ յապացոյց երկնի և երկրի տպաւորեաց զկազմուած խորանին խորհրդական և քահանայապետական զգեստուն սրբական. և այսուքիկ 'ի տեսիլ աչաց տեսողաց: Իսկ 'ի լուսաւորութիւն մտաց բանականաց դրոշմեաց գրով զպատմութիւնս արարածոց, զորս ետես իմանալի աչաւք, բայց հակիրճ և համառօտ և ոչ բաղմաբան: Այլ և բազում զերծեալ փրթաւ 'ի մտաց նորա՝ որպէս վասն հրեշտակաց և ջրոց և վերին Երուսաղեմի ինչ ոչ ճառեաց, և զանկումն դրախտին ոչ 'ի կարգադրութեան աւուրցն յայտ արար, այլ յետոյ իմն պատմեաց: Այս-պէս և զպատմութիւն դարուցն առաջնոց և անցիցն անցելոց հարևանցի իմն պատմէ, զբուն ազգին զոծ կարգաբերելով և զայլ երկուց որդւոցն Նոյի սպանելով՝ եթող անկատար:

Իսկ 'ի կազմել զխորանն կարաւտացան ճարտարաց և նիւթից, ուստի Հոգին Սուրբ ելից զԲեսելիէլ և զԵղիաբ յարուեստս նկարակերտութեան, և զժողովուրդն յորդորեաց 'ի պտղաբերութիւն տարազու նիւթոյն: Նոյն Հոգին՝ աստուած կատարեալ, կացցէ և այժմ ընդ աջմէ գործակից գործոյս և կատարիչ կամաց խորհրդոյս՝ լոյս արփիափայլ ծագելով մտացս մթացելոյ. ճարտարապետն աշխարհաց ճարտարացուսցէ զհոգի իմ հրաշալի հողմովն,



որ ելից զվերնատունն, և հրահոսան ճառագայթիւք ճարտարացուսցէ զտեսութիւն հոգւոյ իմոյ՝ առնելով զիս արուեստագէտ դաստաքար՝ որպէս և անդ զԲեսելիէլ, այլև դպիր բազմիմաստ իբրև զԵզր Սաղաթիէլ — կրկնագիր դպիր աւրինաց և մարգարէից, տալով նիւթ իմաստից 'ի սատարութիւն ինձ զժամանակագիր մատեանս առաջնոց՝ յօրինել սփիւռս [1] սրբականս 'ի փառս Սրբոյն:

Արդ թէպէտ յօժարութիւն սրտիս ստիպէ զիս 'ի մի բաւանդակել զամենայն պատմութիւնս և զպատճառս իւրեանց, սակայն կասեալ գտանիմ՝ յանվարժութիւնս իմ հայելով, ևս և յանշափութիւն գրելոյն: Զի թէ որ ընդ Աստուծոյ խաւսէր՝ Մովսէս, զբազում պատմութեամբք զանց առնէր. և որ սիրտ և կամք Տեառն անուանէր՝ Դաւիթ, զինքն և զամենայն մարդ սուտ ասէր. և աստուածիմաստն Սողոմոն, որ հինգ հազար առակս խաւսէր, զոր ինչ առ ոտն կայր ոչ նշմարէր. և Աղեքսանդր, որ իմաստութեամբ և արիութեամբ աշխարհի տիրէր՝ 'ի կնոջէ միոջէ 'ի կալանս ըմբռնէր. և Արիստոտէլ, որ 'ի ներշրջականն ճեմէր՝ յԵւրիպոսէ յաղթեալ գտանէր. և Պայէաս Պտողմեանց, որ զընակութիւնս մարդկան չափէր՝ զբազում տեղիս զանց առնէր. և Պաւղոս, որ Քրիստոսիւն խաւսէր՝ զանձն իւր ոչ իմանայր և փոքր 'ի շատէ մարգարէանայր. — ապա զի՞նչ պարտ է ասել յաղագս մերաւք մակարդեալ մտացս անկարութեան [2], որ ոչ 'ի տեսականն տարժանեցայ և ոչ զգործնականն գործակալեցի [3]. այլ փոխանակ փութոյ փառաց նորա փուշս դիզեցի լուցկի [4]

---

[1] Այլ օր. ոսփեալս: — [2] Այլ օր. անկրթութեան: — [3] Այլ օր. գործակալեցայ: — [4] Այլ օր. լուցիկ:

լոման գեհենին: Իսկ զայս իրակերպութիւնս, զոր սկսայ յուսով՝ ոչ յաղագս յիշատակի ինչ բարեաց յաստուածայնոյն կամ 'ի մարդկայնոյն, այլ զմիտս իմ մարզելով 'ի գործս և 'ի տեսութիւնս գրաւորական վերծանութեանց, թերևս փոքր ինչ արգելցի 'ի ցնդմանէ երկրաքարշական ցնորմանց: — Արդ օ՜ն[1] առեալ յօգնականութիւն ոգւոյս զօժանդակութիւն Հոգւոյն Սրբոյ և զբարեխօսութիւն սուրբ Աստուածածնին և ամենայն սրբոց՝ սկսեալ յԱստուծոյ, յԱստուած աւարտեսցուք զբանս՝ 'ի փառս և 'ի գովութիւն Բանին Աստուծոյ:

[1] Այլ օր · ալէլօէ:

Երեք կամարք երկնից անդադար պարագային շուրջ ըզչորեքին տարերքս 'ի վեր և 'ի վայր միշտ: Հուր՝ ջերմ և ցամաք, սուր և անդայտ՝ անաւսր: Օդ՝ խոնաւ և ջերմ, խիտ և շարժուն՝ նաւսր: Ջուր՝ ցուրտ և խոնաւ, բութ և գէճ՝ պարզ: Երկիր՝ ցուրտ և ցամաք, խիտ և չոր՝ թանձր:

Յերից երկնային կամարացն պարագայից շրջագային և երեքին տարերքս՝ Հուր և աւդ և ջուր, որք առնեն զբան նորա, սպասաւորք և պատկերք անքննութեան և նախախնամութեան Աստուծոյ: Իսկ երկիր հաստատեալ կայ 'ի մէջ սոցա՝ վեցեկի գնտիցս 'ի թուիցս իբր անդրին 'ի Արեաւէ. և բանն Աստուծոյ բարձեալ բերէ զբոլորն, երեք իրք պատկեր իւրեան առնելով զարարածս՝ անժամանակութեամբ, անբաւութեամբ և անտեղութեամբ. բայց քանակաւ և որակաւ և փոփոխմամբն զատչին յարարչէն: Թէպէտ և բազմաշխատ եղեալ մարդկայինս բնութիւն իմաստասիրել կամելով յաղագս Աստուծոյ և արարածոցս, սակայն վրիպեալ գտան 'ի ճշմարիտն գիտութենէ, զոր ինչ ասացին աստուածաբանքն եկեղեցւոյ և ճարտասանքն համալսարանին վասն անեղ և անմահ էութեանն, կամ վասն հրեշտակական բարեկարգ յարմարութեանց, կամ յաղագս ընթացից ներշրջական լուսաւորացդ, կամ վասն ծովածին կենդանեացդ, օդականաց և լողականաց, կամ վասն ժի՞ սե-

ուց հողմոց և բերմանց նոցա, կամ վասն երկրաշարժութեան և հրաշէցն, որ 'ի սմա. կամ վասն բուսոց հողոց և զանազան սերմանց, որ 'ի սմա. կամ վասն բարուց գազանաց և ամենայն չորքոտանեաց և սողնոց, որ 'ի սմա. կամ վասն կարծրական քարանցն և հրահալական նիւթոց. և գլխովին իսկ յաղագս բնութեան և կազմութեան մարդոյ, և անուաձև շրջմանց ժամանակացս և տարափոխ յեղանակացս, ևս և մեկնութիւն գրոց հոգեմատենից. զոր և պարզաբար իսկ ասացից, — զի զոր ինչ ասաց և տսէ մարդ՝ ընդ կարծեօք է և ոչ հաստատութեամբ: Զայսոցիկ գիտութիւն բացայայտէ Որդին Աստուծոյ 'ի յարութեան մերում և յարքայութեան իւրում, յորժամ մատուսակէ սիրելեացն իւրոց բաժակաւն իմաստութեան և վերահասութենէ անհասանելեացս այսոցիկ. յորժամ սերմանեալքս տկարութեամբ՝ յանձնեմք զօրութեամբ և յառաջին անեղծութիւնն գամք:

## ՑԱՂԱԳՍ ՎԵՑՕՐԵԱՑ ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ

'Ի սկզբանէ արար Աստուած զերկինն հրեղէն և 'ի նմա հրաշակերտեաց զհրեշտակս տասնեակ դասուք և պատուով զանազանեալս և յանբաւ բիւրս աճեցեալս, գոլով նոցա հուր անկիզելի և լոյս թափանցական և աւդ աւանց սողման. որոց անուն էութեանն և թիւք որքանութեան և փառք բնութեան և չափք իմաստութեան անհաս մնան 'ի մեզ: Արար և զլոյսն խզում 'ի հրեղէն արփւոյն, այլ և զհուր և զաւդ, զջուր և զերկիր:

Արար Աստուած յերկրորդ աւուրն զհաստատութիւնն՝ սեղմ և թաղուն բնութիւն, հինգերորդ էութիւն. և ափաչափ արարեալ զամենայն ջուրս՝ զկէսն կամար յօրինեաց 'ի վերոյ հաստատութեանն, զի արգելցէ զանշէջ տոչորումն վերին արփւոյն, և զկէսն եթող 'ի պէտս աշխարհի: Շինեաց և յայսմ աւուր զվերինն Երուսաղէմ՝ ժողովարան անդրանկաց կատարելոց՝ երկոտասան պարսպօք պատեալ և երկոտասան դրամբք միափերթ մարգարտօք յօրինեալ: Իսկ գնացք գետոյն և ծառք 'ի տարին երկոտասան անգամ պտղաբերեալք: — Այս է հեզոյն ժառանգութիւն:

Արար Աստուած տրոհիլ ջրոց յերրորդ աւուրն յեզերս աշխարհի և 'ի գոգս նորա. և սահմանեաց զաղբերս և ըդգետս միջագնացս. իսկ զերեսս երկրի կանաչազեղ զարդա-

բեաց բուսովք, որոց սկիզբն բողբոջ հողոյն է, և կատարումն՝ սերմն իւր 'ի նմին: Իսկ զծառս բնեցոյց յերկրէ զանպտուղսն՝ 'ի բոյս հաւուց, և զպտղաբերսն՝ 'ի կեր կենդանեաց[1]. որոց սկիզբն մամուռն մօտ 'ի բոյս, և կատարումն՝ արմաւենին մերձ 'ի կենդանիս, յորս է արու և էգ: Տնկեաց զդրախտն յԷդեմ ընդ արևելս[2]՝ անթառամ պտղօք և անթափ տերևօք, բարձր յերկրէ լուսնին չափ՝ որպէս վերինն Երուսաղէմ 'ի դրախտէն արեգական չափ:

Իսկ 'ի չորրորդ աւուրն զլոյսն առաջին անմարմին բաժանեաց յերիս մասունս. — 'ի սկզբան աւուրն զարեգակն ջերմ և չոր և անուագնաց, իսկ յերեկունն զլուսինն լի անթերի՝ գողոր և կակուղ, նաև զջառս աստեղաց[3] ցըրուեաց 'ի վերայ աւուրց ցուրտ բնութեամբ: Կարգեաց զերկոտասան կենդանակերպս անմոլարս՝ օրինակս ապագայ դարուն և զգնացս եօթն մոլորակացն[4], որք տիպ են այժմեան յաւիտենիս. որք և յընթացս իւրեանց ազդումն տան մնաց մարդկան գլինելոցն: Այսօր սկսաւ ժամանակ արեգակամբ չափել: Այս աշխարհիս անբնակ է մարդկան, զի յոլորտս հիւսիսոյ վեցն ամիսն լոյս է և վեցն խաւար. և 'ի հարաւ հանդպառ միաչափ լինի օրն և գիշերն: Իսկ երկբաշխքն քառասուն օրագնաց ասացին զայրեցեալ գօտին անշէն, և յայն կոյս մարդաբնակ զկլիմբայ աշխարհն. իսկ այժմ յինն բաժնէ աշխարհիս՝ եօթն քրիստոնեայք են՝ վաթսուն և ութ ազգք, և երկու բաժինն՝ ոչ, չորք ազգք. լուսինն 'ի թուխս երթայ և աստեղքն թուպատալով[5]:

---

[1] Այլ օր. և զանազանաբերան կենդանեաց: — [2] Այլ օր. յԷդեմ յարևելս: — [3] Այլ օր. նաև զջոկս աստեղաց: — [4] Այլ օր. օրինակս ապագայ դարուն, որք են գնացք եօթն մոլորակացն: — [5] Այլ օր. թուպատելով:



Հրաշագործեաց Աստուած 'ի հինգերորդ աւուր 'ի ջրոց բխեալ զհազար ազգս շնչաւորս. վեցհարիւր ազգք լողան 'ի ջուրս թագաւորան իւրեանց լևիաթանիւ. և չորք (թեւաբուսեալ) թռեան յօդս՝ խիլայեալք զանազան փետրովք:

— Այսօր եղև անկումն սատանայի յերկնից:

Արար Աստուած 'ի վեցերորդին զգազանս և զանասունս և զսողունս. առեղծ զԱդամ ձեռօք երեսնամեայ և զԵւայ երեք ժամու յետոյ՝ վաթսուն և հինգ աւուրբք, ևս և ըղծառս գեղեցիկս, և զարծիւն և զառիւծն և զեզն առաջի աչաց Ադամայ: Եդ զմարդն 'ի դրախտին յետ քառասուն և երկու աւուր և հրամայեաց դնել անուանս ամենայն կենդանեաց և իշխել ամենայնի թագաւորաբար, և չուտել 'ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի: Ասացին բնախօսքն, թէ ժիպակ և ծծումբ խառնեալ կայ 'ի հողն, և յարեգական ջերմութենէ եռացեալ գոյանան ոսկի և արծաթ, պղինձ և երկաթ, կլայեկ և արճիճ, և ամենայն գոյնք ականց, և բոյսք համօրէն:

Յանգեաւ Աստուած յաւուրն եօթներորդի յամենայն գործոց իւրոց և սկսաւ նախախնամել զարարածս իւր. օրհնեաց զօրս զայս և 'ի սմա սրբոց իւրոց հանգիստ և փաւըս պատրաստեաց, որ ցուցանէ թէ բնաւին ոչ հանգչի Աստուած 'ի նախախնամելոյ՝ զի բառնայ զամբարիշտն յերկրէ:

Յայլում ուրբաթու յանցեան նախաստեղծքն և ելին 'ի դրախտէն և անկան 'ի Սելան կղզի: Իսկ ընդ բուսանել փըշոյն յաղագս անիծիցն՝ բուսան և ծաղիկք 'ի պէտս բժըշկութեան մարդկան: Իսկ քրովբէական սուրն՝ որ պահէր զդրախտն, շանթիքդ է՝ որ անկանի յերկնից յահ և յերկիւղ ամբարշտաց. և ջուրք ջերմկաց յանդնդային հրոյն

են, որ 'ի կատարածի տանջէ զմեղաւորս, և սրբոցն՝ 'ի վերին արփւոյն է: Ընդայս իմն է ժամանակն մարդոյն 'ի դրախտին լինելոյ, մի՝ զի ընդ անմահս էր վիճակեալ, և դարձեալ՝ զի ոչ է ընդ արեգական, որով իմանին ժամանակք: Բայց ըստ (Է) վկայութեան Եւսեբեայ պարտիմք իմանալ, եթէ որչափ Քրիստոս յաշխարհի եկեաց՝ նոյնքան Ադամ 'ի դրախտին. և որչափ Տէրն 'ի խաչին՝ նա յետ մեղանացն յամեալ 'ի դրախտին. և յորում ժամու էջ Տէրն 'ի գերեզմանն՝ նա ընկեցաւ 'ի դրախտէն յերկիր: Իսկ գեղարդաւոր և աշտէաւոր սերովբէքն ընդ հեռանալն Ադամայ և նորա վերացան: Եւ զհանդերձն մաշկեղէն 'ի յօդոյ արար Աստուած զազմատացի, և բնակեցոյց զԱդամ յանդիման դրախտին, որպէս զյանցաւորն հանեն յեկեղեցւոյ 'ի ժամ պատարագին, զի լացցեն զմեղս իւրեանց: Զայն միանգամ մեղաւ Ադամ Աստուծոյ, և զայլ ամենայն ժամանակս անմեղ յապաշխարութեան եկաց՝ որպէս Սողոմոն վկայէ:

Յայսմհետէ հանդերձեալ եմք հանդիսացուցանել անուամբ զկարգս ընտրելոցն:

ՔԱՀԱՆԱՅՔ

Ադամ: Աբէլ. Ենովք. Նոյ. Աբրահամ: Սահակ. Յակոբ. Մելքիսեդեկ. Մովսէս. Ահարոն. Նաբաթ. Աբիաթ. Եղիազար. Իթամար. Փենէէս. Եղիազար. Փենէէս. Յեսու. Աւագին. Ազարիա. Զարեհ. Մարու. Ամարիա. Աքիտոբէլ. Փենէէզ. Ամարիա. Հեղի. Ոփնի. Փենէէզ. Աքիտովբ. Աբիադար. Յոհաննէս. Փենէէզ. Աբիաս. Բոքի. Ոզիէլ. Զարահիայ. Ամրայէլ. Ամարիայ. Սամուէլ. Աքիմելէք. Աբիաթար. Աքիտովբէլ. Սադովկ. Ազարիայ. Սողոմ: Մովսիայ. Ելկիայ. Սիրիայ. Ազարայ. Սադովկ. Աքիմելէք. Սադովկ. Մամիայ. Սադուկ. Ազարիայ. Ահիմեէ. Աքիմելէք. Խոդայ. Խադա. Յեսու. Յիսուդաք. Եղիշէ. Սողովմ: Յովեդայ. Մանասէ. Ամոս. Ազարիա. Անանիա. Շմաւոն. Մերարի. Յովսադաք. Ազարիա. Ինադաւ. Ուրիայ. Յովհաննէս. Անդրիմաքոս. Ոնիայ. Ելիկիայ. Շմաւոն. Ամարիայ. Ազարիայ, Ամորիայ. Աքիտոբ. Սադովկ. Սողովմ: Եզեկիայ. Ազարայ. Քեղկի. Ուրիայ. Սարրի. Յովսեդեկ. Շիրիայ. Սոփոնիա. Յեսու. Յովակիմ: Եղիշէէ. Յովիդեայ. Յովհաննէս. Յովիդայ. Մանասէ. Անդրիմաքոս. Ոնիայ. Շմաւոն. Եղիազար. Մանասէ. Ոնիայ. Յովսեպոս. Շմաւոն. Հայր Յեսու. Միրաքայ. Մենաղայոս. Յասոն. Ղազարոս. Յակիմոս.

Յուդա Մակաբէ. Մատաթիա՝ Է. Մակաբէ. Յովնաթան. Շմաւոն. Յովհաննէս. Հիւրկանոս. Արիստաբուլոս. Աղեքսանդրոս. Հիւրկանոս. Անանիէլ. Զաքարիա. Շմաւոն. Աննայ. Կայիափայ. Յիսուս Քրիստոս 'ի խաչին՝ հարիւր և երեսներորդ քահանայ. Հերովդէս աղուէս. Ագրիպպաս. Ագրի. Հերովդէ: — Ըստ բարձման քահանայք և թագաւորք 'ի Հրէից:

## ՄԱՐԳԱՐԷՔ

Ադամ. Ենովս. Ենովք. Ղամէք. Նոյ. Աբրահամ. Յովսէփ. Յովբ. Մովսէս. Մարիամ. Դեբովրայ. Աննայ. Սամուէլ. Դաւիթ. Գադ. Ասափ. Նաթան. Սադովկ. Ափիայ. Սամէա. Եյուդ. Յովա. Յովէլ. Ազարիա. Անանիա. Եղիա. Եղիսէ. որդիք մարգարէից որք 'ի Բեթէլ և յԵրիքով. հարիւր և յիսունքն 'ի յայրին. Յեսու. Ոզէէլ. Միքա. Ազարիա. Յովիադաէ. Անանիայ. Եսայի. Խոզդիայ՝ կին քահանայի. Աբրահամունէ. Երեմիա. Բարուք. Դանիէլ. Անանիայ. Ազարիայ. Միսայէլ. Եզեկիէլ. Եզր. Ովսէէ. Ամովս. Միքիա. Յովէլ. Աբդիու. Յունան. Նաւում. Ամբակում. Սոփոնիայ. Անգիա. Զաքարիա. Մաղաքիա. Զաքարիա. Յովհաննէս. Սիմէոն. Աննայ. Եղիսաբէթ. Աստուածածինն. Ագաբոս. Չորք դստերք Փիլիպպոսի. յԱնտիոքայ եկեալ մարգարէք: — 336 են սոքա: Են և այլք բազումք:

## ԹԱԳԱՒՈՐՔ

Ադամ. Սէթ. Ենովս. Կայնան. Մաղաղիէլ. Յարեթ. Ենովք. Մաթուսաղայ. Ղամէք. Նոյ. Սեմ. Արփաք-



սաթ. Կայինան. Սաղայ. Եբեր. Փաղեգ. Ռագաւ. Սերուք. Նաքովր. Թարայ. Աբրահամ. Իսահակ. Յակոբ. Յուդայ. Փարէզ. Եզրոմ. Արամ. Ամինադաբ. Նաասոն. Սաղմոն. Բոոս. Ովբէթ. Յեսսէ. Դաւիթ. Սողոմոն. Ռոբովամ. Աբիայ. Ասայ. Յովսափաթ. Յովրամ. Ոքոզիայ. Գոթողիայ. Յովաս. Ամասիայ. Ոզիայ. Յովաթամ. Աքազ. Եզեկիայ. Մանասէ. Ամովս. Յովսիայ. Յովաքազ. Սեդեկիայ. Սաղաթիէլ. Զօրաբաբէլ. Աբիուդ. Եղիակիմ. Ազովր. Սադովկ. Աքին. Եղիուդ. Եղիազար. Մաթան. Յակոբ. Յովսէփ:

## ԹԱԳԱՒՈՐՔ ԻՍՐԱՅԵԼԻ

Յերոբովամ. Նաբատ. Բաասա. Էլայ. Զամբրի. Ամրի. Աքաբ. Ոքոզիայ. Յովրամ. Յէու քաջ. Յովաքազ. Յովաս. Յերեբովամ. Զաքարիայ. Սելում. Մանայեմ. Փակէէ. Փակէէ. Ովսէէ: 'Ի մետասան ամին Աքազու բարձան թագաւորք Իսրայելի: — Ինն և տասն են սոքա, որք տիրեցին ամս 250:

## ԴԱՏԱՒՈՐՔ

Յեսու. Գոթոնիէլ. Աւովդ և Սամեգար. Դեբովրա և Բարաք. Գեդեհոն, որդիք նորա. Աբիմելէք. Թովղա. Յայիր. Յեփթայէ. Եսեբոն. Իլոն. Ղաբդոն. Սամփսոն քաջ. Սամեգար. Հեղի և որդիքն. Սամուէլ մարգարէ և Սաւուղ:

## ՆԱԽԱՀԱՐՔ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ Ի ՂՈՒԿԱՍՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ

Աստուած. Ադամ. Սէթ. Ենովս. Կայնան. Մաղաղեէլ. Յարեդ. Ենովք. Մաթուսաղայ. Ղամէք. Նոյ. Սեմ.

Արփաքսադ. Կայնան. Սաղայ. Եբեր. Փաղէկ. Ռագաւ. Սերուք. Նաքովր. Թարայ. Աբրահամ. Սահակ. Յակոբ. Յուդայ. Փարէս. Եսրոմ. Առնեայ. Ադմեայ. Արամ Ամինադաբ. Նաասոն. Սաղման. Բոոս. Ովբէդ. Յեսսէ. Դաւիթ. Նաթան. Մատաթ. Մեննայ. Մեղեայ. Եղկիմ. Յովնամ. Յովսէփ. Յուդայ. Սիմէոն. Ղեւի. Մատթէ. Յովրամ. Եղիազար. Յեսու. Էրայ. Եղմովդադ. Կովսամ. Ադդայ. Մելքա. Ներայ. Սաղաթիէլ. Զորաբաբէլ. Ռեսայ. Յովնամ. Յովդայ. Յովսէք. Մեննա. Մատաթէ. Մաաթ. Նանգէ. Եսղայ. Նաւում. Ամովս. Մատթա. Յովսէփ. Յաննէ. Մելքայ. Ղեւի. Մատաթէ. Հեղի. Յակոբ. Յովսէփ. Յիսուս Քրիստոս: Ութսուն են սոքա:

ԻՇԽԱՆՔ ՀԱՅՈՑ

Յաբէթ. Գամեր. Թիրաս. Թորգոմ. Հայկ ա. Արամանեակ. Արմայիս. Ամասիա. Գեղամ. Հարմայ. Արամ. Արայ. Անուշաւան. Պարէտ. Արբոկ. Զաւէն. Փառնակ. Սուր. Հաւանակ. Վաշտակ. Հայկակ. Ամբակ. Առնակ. Շաւարշ. Նորայր. Վստամ. Կար. Գոռակ. Հրանտ. Ընձաք. Գղակ. Հորոյ. Զարմայր:

ԹԱԳԱՒՈՐՔ ՀԱՅՈՑ

Պերճ, յաւուրս Դաւթի. Արբուն. Բազուկ. Հոյակ. Յուսակ. Կայպակ. Հսկայորդի. Պարոյր՝ Թագաւոր առաջին. Հրաչեայ. Նաբու. Փառնաւազ. Պաճոյճ. Կոռնակ. Փաւոս. Հայկակ. Երուանդ. Տիգրան. Բաբ. Տիրան. Վահագն. Առաւան. Ներսեհ. Արմոգ. Բագամ.



Վան. Վահէ. — զսա սպան Աղէքսանդր: Յիսուն և ինն են սոքա յազգէն Հայկայ:

ԱՐՇԱԿՈՒՆԻՔ ՀԱՅՈՑ

Վաղարշակ՝ իբ. Արշակ եղբայրն իւր՝ իգ. Արտաշէս՝ իե. Տիգրան՝ լգ. Արտաւազդ՝ բ. Արշամ՝ ի. — Քրիստոս ծնաւ. — Աբգար. լը. Սանատրուկ՝ լ. Երուանդ՝ ի. Արտաշէս՝ խա. Արտաւազդ՝ բ օր. Տիրան՝ իա. Տիգրան՝ խգ. Վաղարշ՝ իա. Խոսրով՝ խը — զսա սպան Անակ. Անիշխան՝ իէ ամ. Տրդատ՝ ծգ. — սա հաւատաց ՚ի Քրիստոս. Խոսրով՝ թ. Տիրան՝ ժգ. Արշակ՝ լ. պիղծն Պապ՝ է. Վարազդատ՝ գ. Արշակ և Վաղարշակ՝ գ. Խոսրով՝ է. Վռամշապուհ՝ իբ. Շապուհ՝ ե. Արտաշիր՝ գ: — Սոքա իը են՝ թագաւորեալք ամս 568: Բարձան Արշակունիք: Անիշխան՝ ժգ ամ:

ԻՇԽԱՆՔ ՀԱՅՈՑ

Վարդան քաջ՝ ժէ. Անիշխան՝ գ. Մագնոս՝ ի. Վահան՝ լա. Վարդան՝ գ. Պարսիկք՝ գ. Մժեժ՝ լ: — ՚Ի սորա աւուրս եղաւ թուականն հայոց: Դաւիթ՝ լ. Թէոդորոս՝ իե. Համազասպ՝ է. Գրիգոր՝ ժ. Ներսեհ՝ գ: Աշոտ՝ գ. Ներսեհ՝ գ. Սմբատ՝ ի:

ԹԱԳԱՒՈՐՔ ՀԱՅՈՑ ՅԱԶԳԷՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ

՚Ի Նախչուան այրեցին ճմ իշխանս: Աշոտ բագրատունի՝ ժէ. Սմբատ՝ իբ. Աշոտ՝ ի. Սմբատ՝ իը. Աշոտ թագաւոր՝ լգ. Սմբատ խաչեալ՝ իդ. Գագիկ արծրունի՝ է. Աշոտ երկաթ՝ ը. Աբաս՝ իդ. Աշոտ՝ իէ. Սմբատ՝ ժգ.

Գագիկ՝ իթ. Յովհաննէս՝ ի. Սմբատ՝ ժ. Գագիկ՝ բ։ — Շահնշահ էր անուն պատուոյ սոցա։ — Բարձան թագաւորք Բագրատունեաց յԱնւոյ և մնացին 'ի Մածնաբերդ։

ԻՇԽԱՆՔ ԿԻԼԻԿԵՑՈՑ

Փիլարտոս. Ռուբէն սանցի. Կոստանդին. Վասիլ յաջողած. Թորոս. Լեւոն. Թորոս. Ստեփանէ. Մլեհ. Թորոս. Լեւոն արքայ՝ խա. Փիլիպն փռանկ՝ բ. Հեթում՝ խթ. Լեւոն՝ ժբ. Հեթում՝ ժե։ Միանգամայն 129 իշխանք և թագաւորք, իշխանք և թագաւորք, իշխանք և թագաւորք՝ երեք կրկին։

ԹԱԳԱՒՈՐՔ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՓՌԱՆԿՔ

Կոնդոփրի. Մայմուն. Տակրի. Պաղտոյն. Ամրի. Պաղտոյն։ Այսքան սոքա։

ԿԱԹՈՂԻԿՈՍՔ ՀԱՅՈՑ

Յետ երեքհարիւր և եօթն ամաց Ծննդեան Քրիստոսի նստաւ կաթողիկոս Լուսաւորիչն Գրիգորիոս՝ ամս լ. սուրբն Արիստակէս՝ է. սուրբն Վրթանէս՝ ժե. սուրբ Յուսիկ՝ զ. տէր Փառներսեհ՝ ե. սուրբ Ներսէս՝ լդ. տէր Չունակ՝ դ. տէր Զաւէն՝ դ. տէր Ասպուրակէս՝ ե. սուրբն Սահակ՝ ծա. տէր Յովսէփ՝ բ. տէր Գիւտ՝ ժէ. տէր Յոհան Մանդակունեցի՝ ժբ. տէր Բաբկէն՝ ե. տէր Սամուէլ՝ ե. տէր Մուշէ՝ լ. տէր Սահակ՝ ե. տէր Քրիստափոր՝ ե. տէր Ղեւոնդ՝ բ. տէր Ներսէս՝ թ. տէր Յովհաննէս՝ ժե. տէր Մովսէս՝ լ։ — Աստ հայ թուականն եղաւ։ — Տէր Աբրահամ՝ իգ. տէր Յոհան՝ իզ. տէր Կոմիտաս՝ ը. տէր Քրիստափոր՝ բ. տէր Եզր՝ ժ. տէր Ներսէս՝ ի. տէր Անաստաս՝ զ. տէր Իսրայէլ՝ զ. տէր Սահակ՝ իզ. տէր Եղիա՝ ժդ. տէր Յոհան Օձնեցի՝ ժա. Դաւիթ՝ ժդ. տէր Տրդատ՝ դ. տէր Սիոն՝ ը. տէր Եսայի՝ ժդ. տէր Ստեփաննոս՝ ա. տէր Յակոբ՝ ա. տէր Սողոմոն՝ ա. տէր Գէորգ՝ դ. տէր Յովսէփ՝ ժա՝ տէր Դաւիթ՝ իե. տէր Յոհաննէս՝ իբ. տէր Զաքարիա՝ իբ. տէր Գէորգ՝ իբ. տէր Մաշտոց՝ բ ամիս. տէր Յոհաննէս՝ իբ. տէր Ստեփանոս՝ ա. տէր Թէոդորոս՝ ժա. տէր Եղիշէ՝ է. տէր Անանիա՝ իբ. տէր Վահան՝ ա. տէր Ստեփան՝ բ. — Անիշխան՝ ա. տէր Խաչիկ՝ իա. տէր Սարգիս՝ իդ. տէր Պետրոս՝ լթ։ — Զսա տարան յոյնք 'ի Հոռոմս. և անտի և այսր անդ են կաթողիկոսքն։ — Տէր Խաչիկ՝ բ. անիշխան՝ ե ամ. տէր Գրիգորիս՝ ժէ. սա է վկայասէրն 'ի Ծննդաւ 'ի ձեռն Գագկայ թագաւորին։ — Տէր Բարսեղ՝ լա. տէր Գրիգոր՝ ծդ. սա էառ զՀռոմկլայն։ Տէր Ներսէս՝ է. տէր Գրիգոր՝ իբ. տէր Գրիգոր՝ ա. տէր Գրիգոր ապիրատ՝ է. տէր Յոհաննէս՝ ժը. տէր Կոստանդին՝ խզ. տէր Յակոբ՝ ժթ. տէր Կոստանդին եօթանասներորդերրորդ կաթողիկոս նստի 'ի չիզ թուին. իսկ 'ի չլթ թուին Տէր Ստեփան՝ բ ամ. առ սուլտ. Մսրցին էառ զՀռոմկլայն և զսա գերի տարաւ։ Տէր Գրիգոր անաւարզեցին նստաւ 'ի չխբ (1293) թուին։



ԻՇԽԱՆՔ ՎՐԱՑ

Հայկն և եօթն եղբարք իւր. Քարթլոս. Բարդոս. Մովկան. Լեկան. Հերոս. Կովկաս. Եգրիս. Մծխիթա. Ուփլոս. Ափրիտոնացն։ Աստ Աղեքսանդր։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм-ССР
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
562

## ԹԱԳԱՒՈՐՔ ՎՐԱՑ

Փառնաւազ՝ առաջին թագաւոր. Սաւրմակ. Միրվան. Փառնաջում. Արբոկ. Արտակ. Բարտոմ. Միրվան. Արշակ. Ադդերկ. — Քրիստոս ծնաւ: Բարտոմ և Քարթամ. Ազորկ. Արմազէլ. Համազասպ. Դերուկ. Փարսման. Միհրդատ. Ադամ. Համազասպ. Վրոյ. Վաչէ. Բակուր. Միհրան. — սա հաւատաց 'ի Քրիստոս Նունեայ քարոզութեամբ: Բաքուր. Միրդատ. Վարազբաքար. Տրդատ. Փարսման. Միրդատ. Վարչէլ. Միրդատ. Վարազբաքար. Սաւրմակ. Գուարչէր. Վախթանկ. — սա զՏփխիս շինեաց: Դաչէ. Գուրգ ասլան. Փարսման. Փարսման. Բակուր. Քարէպարազ. Գուրամ. Ստեփանոս. Ատրներսեհ. Ստեփանոս. Արչիլ և Միհր. Գուանբեր. Աշոտ. Դաւիթ. Գուրգի. Լեոն. Դեմետրէ. Թէոդոս. Գուրգէն Բագրատունի. Բագարատ. Գուրգի. Դաւիթ. Գուրգի. Թամար. Լաշայ. Գորգի. Ռուսուդան. Դաւիթ փոքր. Դաւիթ մեծ. Դեմետրէ սպանեալ: — հէթ իշխանք և թագաւորք: Դաւիթ. Վախթանկ:

## ԵՊԻՍԿՈՊՈՍՔ ՎՐԱՑ

Տէր Յոհան. տէր Յակոբ. տէր Յոբ. տէր Եղիայ. տէր Յունան. տէր Գրիգոր. տէր Բարսեղ. տէր Մուշեղ. տէր Միքայէլ. տէր Պետրոս. տէր Սամուէլ. տէր Խափեջան. տէր Զիմոգ. տէր Արսաս կաթողիկոս. տէր Ելթայ. տէր Կիւրիոն պիղծ. տէր Մակար. տէր Սիմէոն. տէր Սամուէլ. տէր Բարթուղիմէոս. տէր Յոհաննէս. տէր Բաբելաս. տէր Խափոր: Այսչափս գտաք յօրինակս:

562



## ԹԱԳԱՒՈՐՔ ԱՂՈՒԱՆԻՑ

Արան. Առանայր. Վաչագան՝ որ յետ եկեղեցի շինեաց. Վաչէ. Յաւչագան. Միրհաւան. Սատոյ. Արայ. Ջավանշէն. Միհր. Արմայէլ. Վարդ. Վարդան. Վարդ. Վարազման. Վարազ. Գրիգոր. Գուանշէր քաջ. Վարազ Տրդատ. Վարդան. Ներսեհ. Գագիկ. Ստեփանոս. Վարազ Տրդատ. Ստեփանոս. Ատրներսեհ. Գրիգոր. Սեւադայ. Գրիգոր. Յովհաննէս թագաւոր: Այսչափ գտաք՝ երեսուն թուով:

## ԿԱԹՈՂԻԿՈՍՔ ԱՂՈՒԱՆԻՑ

Սուրբն Եղիշայ. սուրբ Գրիգորիս. տէր Շուփհաղիշայ. տէր Մատթէոս. տէր Սահակ. տէր Մովսէս. տէր Պանդ. տէր Ղազար. տէր Գրիգորիս. տէր Զաքարիա. տէր Դաւիթ. տէր Յոհան. տէր Երեմիայ. տէր Աբաս. — աստ եղաւ հայ թուականն: տէր Վիրոյ՝ լգ. տէր Զաքարիա՝ ժե. տէր Յոհան՝ իէ. տէր Ուխտանէս՝ ժբ. տէր Եղիազար՝ գ. տէր Ներսէս՝ ժէ. տէր Սիմէոն՝ բ. տէր Միքայէլ՝ լե. տէր Անաստաս՝ գ. տէր Յովսէփ՝ ժե. տէր Դաւիթ՝ գ. տէր Դաւիթ՝ թ. տէր Մատթէոս՝ բ. տէր Մովսէս՝ բ. տէր Ահարոն՝ բ. տէր Սողոմոն՝ ա. տէր Թէոդորոս՝ գ. տէր Սողոմոն՝ բ. տէր Յոհաննէս՝ իե. տէր Մովսէս՝ ա. տէր Դաւիթ՝ իբ. տէր Յովսէփ՝ թ. տէր Սամուէլ՝ ժգ. տէր Յունան՝ բ. տէր Սիմէոն՝ իա. տէր Դաւիթ՝ է. տէր Սահակ՝ ժբ. տէր Գագիկ՝ ժգ. տէր Դաւիթ՝ գ. տէր Պետրոս՝ ժբ. տէր Մովսէս՝ գ: — Այսչափս գտեալ է յօրինակաց: իե են սոքա:

## ԿԱՅՍԵՐՔ ՈՐՔ ԹԱԳԱՒՈՐԵՑԻՆ Ի ՃՁԴ ՈԼՈՄՊԻԱԴԻՆ

Գայիոս՝ ամս ե. Աւգոստոս՝ ծզ։ — Ծնաւ Քրիստոս Յիսուս։ — Տիբերիոս՝ իգ. Գայիոս՝ դ. Կղօդիոս՝ ժդ. Ներոն՝ ժդ. Վեսպասիանոս՝ ժ. Տիտոս՝ բ. Դոմետիանոս՝ ժզ. Ներուաս՝ ա. Տրայիանոս՝ ժթ. Ադրիանոս՝ իա. Անտոնինոս՝ իգ. Աւրելիանոս՝ ժթ. Կոմոդոս՝ ժգ. Նղիանոս՝ ա. Սեւերոս՝ ժը. Անտոնինոս՝ է. Մակրինոս՝ ա. Փիլիպպոս՝ է։ — Քաղաք ամ Քառնայ։ — Դակիոս՝ ա. Գալլոս՝ բ. Վալերիանոս՝ ժե. Կղօդիոս՝ բ. Աւրելիանոս՝ զ. Պրոբոս՝ է. Կարոս՝ բ. Դիոկղետիանոս՝ ի. Կոստանդիանոս՝ լգ. Կոստանդին՝ իգ. Յուլիանոս՝ բ. Յովիանոս՝ ա. Վաղենտիանոս և Վաղէս՝ ժա. Գրատիանոս՝ է. Թէոդոս մեծ՝ իե. Արկադէոս և Ոնորիոս՝ իգ. Թէոդոս՝ լգ. Մարկիանոս՝ ե. Լեւոն՝ ժէ. — մինչ՚ի սա կայսերքն Փռանկք էին. և յետ սորա Հոռոմք թագաւորեցին։ — Յուստինիանոս՝ թ. Յուստինիանոս՝ լգ. Յուստինիանոս՝ ժգ. Տիբեր՝ ե. Մօրիկ՝ ի. Փոկաս՝ բ. Հերակլ՝ լա. Կոստանդին՝ գ. Կոստանդին՝ իբ. Կոստանդ՝ ժգ. Յուստինիանոս՝ ժբ. Լեւոն՝ գ. Ամպտիմոս՝ գ. Յուստինիանէ՝ գ. Փիլիպպոս՝ գ. Թէոդոս՝ ա. Արտեմ՝ ա. Լեւոն՝ իգ. Կոստանդին՝ լէ. Լեւոն՝ ե. Կոստանդին՝ ժ. Նիկեփոռ՝ թ. Միքայէլ՝ գ. Լեւոն՝ բ. Միքայէլ՝ թ. Թէոփիլոս՝ ժե. Միքայէլ՝ իգ. Վասիլ՝ իբ. Լեւոն՝ իգ. Աղեքս՝ գ. Ռոմանոս՝ իբ. Կոստանդին՝ ժգ. Ռոմանոս՝ գ. Նիկեփոր՝ է. Կիւռժան՝ զ. Վասիլ՝ ժա. Կոստանդին՝ գ. Ռոմանոս՝ ե. Միխայէլ՝ զ. Կիւռժան՝ բ. Միխայէլ՝ ժբ. Թոռոսն՝ գ. Դուծիկ՝ ծ. Դիուժէն՝ ե. Մի-



խայէլ՝ բ. Աղեքսան՝ ղբ. Կալուժան՝ գ. Մանիլ՝ լէ. Աղեքսան՝ իգ. Փխինն պլուծ։ Զայսչափս գտի՝ ղէ թուով։

## ԹԱԳԱՒՈՐՔ ԱՐՇԱԿՈՒՆԻՔ ՊԱՐՍԻՑ

Արշակ քաջ՝ լա. Արտաշէս՝ խգ. Արշակ մեծ՝ ծգ. Արշական՝ լա. Արշանակ՝ լ. Արշէս՝ ի. Արշաւիր՝ խգ։ — Ծնաւ Յիսուս Քրիստոս։ Արտաշէս՝ լե. Դարեհ՝ լ. Արշական՝ ժէ. Արտաշէս՝ ի. Պերոզ՝ լգ. Վաղարշ՝ ծ. Արտաւան՝ լա։ — Զսա սպան Արտաշիր պարսիկ։ Արտաշիր՝ խե. Շապուհ՝ իգ. Ներսեհ՝ թ. Որմիզդ՝ գ. Շապուհ՝ հբ. Արտաշիր՝ գ. Վռամ՝ իա. Յազկերտ՝ ժթ. Պերոզ՝ իբ. Վաղարշ՝ գ. Կաւատ՝ է. Ջամասպ՝ բ. Կաւատ՝ ժէ. Խոսրով՝ խբ. Որմիզդ՝ ժբ. Խոսրով՝ լե. Կաւատ՝ ա. Արտաշիր՝ բ. Խոռեմ՝ ա. Խոսրով՝ ա. Բոր և Զարմանդուխտ քուերք՝ ա. Յազկերտ՝ ժբ։ — Զսա սպան տաճիկն։ Այսքան պարսից։

## ԲՌՆԱԿԱԼՔ ՏԱՃԿԱՑ

Մահմատ փէյղամպար սուտ՝ ժբ. Աւթման՝ ժգ. Մաւիէ՝ իբ. Իզիտ՝ գ. Մրվան՝ ա. Աբդլմելք՝ իա. Վլիթ՝ թ։ — Սա այրեաց զեկեղեցիս հայոց ՚ի Նախչուան։ Սուլեյման՝ բ. Աւմար՝ բ։ — Սա զխաչ և զպատկերս եբարձ։ Շամահեշմին՝ ժբ. Վլիթ՝ բ. Մրվան՝ գ. Սալահ՝ գ. Աւդլա՝ իբ. Մահադի՝ ժ. Մուսէ՝ ա. Ահարոն՝ իգ. Մահմատ՝ գ. Մամուն՝ իա. Աբուսահայ՝ բ. Ահարոն՝ գ. Ջափր՝ ժգ. Մահմատ՝ ա. Ահմատ՝ գ. Աբդլալայ՝ գ։ — Զսա սպան Սալջուկ թուրքմանն և ինքն նստաւ աշխարհակալ։ Տաճիկք նստան։

ՍԱԼՋՈՒԿՔ

Մուսեփայըղ· Դողարէկ· Ալփ ասլան· Մէլէք շահ· Մահմուտ սուլտան· Բէքիարուխ· Մահմուտ· Մահմուտ· Սանջար սուլտան· Դաւութ· Տուղրիլ· Մասխութ· Ասլան սուլտան· Մուղրիլ քաջ· Ալփ ասլանն· Բէքիարուխ· Սաւփար· Իյղաղի· Մահմուտ· Խլիճ ասլան· Փալհաւան· Իլտկուզ աթաբէկ· Ծուվից սուլտան· Ալփ ասլան· Տուղրիլ· Մասութ։ — Զսա սպան Թաթարն և ինքն բռնակալեաց զաշխարհս։

ՂԱՆՔ ԹԱԹԱՐԱՑ

Ջանկզ ղան· Ճաւքոթայ· Տոլատայ· Ջլայուն· Ջաղատայ· Գիուկ ղան· Մանկու ղան· Արաբոքայ· Ղուպիլայ [1]։

ՊԱՏՄԱԳԻՐՔ Ի ՍԿԶԲԱՆԷ

Մովսէս աստուածախօս· Դաւիթ մարգարէ· Սողոմոն իմաստուն· Սամուէլ և Նաթան· Յեսու· Եզարիա· Երեմիա մարգարէ· Եզր· Յովսէպոս, որ է կայիափայ· Երինոս· Եւսեբի· Սոկրատ մեծ և փոքր· Եփրիկանոս· Անդրէաս իմաստասէր· Եպիփան հայրապետ· Դատրիանոս· Ղերուբնայ· Մար Աբաս Կատինա· Ագաթանգեղոս· Զենոբ ասորի· Փաւստոս Բիւզանդ· Ղազար· Ներսէս· Սահակ· Կորիւն· Սայակայ· Խոսրով· Թումայ վարդապետ, Մովսէս Խորենացի· Ղազար Փարպեցի· Եղիշէ վարդապետ· Շապուհ Բագրատունի· Եւսեբի, որ 'ի Ճերակլն· Մովսէս աղուանից· Ղեւոնդ երէց· Ուխտանէս եպիսկոպոս· Յովհաննէս կաթողիկոս· Ստեփանոս ասողիկ վարդապետ· Արիստակէս Լաստիվերտացի· Յովհաննէս կոզեռն վարդապետ· Յովաննէս տարօնեցի վարդապետ· Մաթէոս ուռհայեցի վարդապետ· Անանիա վարդապետ· Մխիթար քահանայ· Վահրամ տիգրանակերտացի· Յոհաննէս Սարկաւագ վարդապետ· Սամուէլ քահանայ· Մխիթար գոշ վարդապետ· Միխայէլ ասորոց պատրիարգ· Վանական վարդապետ· Վարդան վարդապետ· Կիրակոս վարդապետ և ես՝ Մխիթար վարդապետ։

[1] Ջանուանս առաքելոց, եպիսկոպոսաց Երուսաղէմի, պատրիարգացն Անտիոքայ, պապիցն Հռովմայ, պատրիարգացն Աղեքսանդրիոյ, Եփեսոսի, Կոստանդնուպօլսի 'ի բաց թողաք, քանզի խառն 'ի խուռն յառաջ բերեալ էին 'ի մերում գրչագիր օրինակի։

ՇՆՈՐՀՕՔ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԿՐԿԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆ ՏԷՐ ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ Ի ՓԱՌՍ ԱՍՏՈՒԾՈՅ

Սկիզբն ժամանակաց ելքն Ադամայ և Եւայի 'ի դրախտէն, որք յետ եօթնասուն ամի սգալոյն իւրեանց՝ ապա անկան 'ի կարգս ամուսնոց և ծնան զԿայէն և զԿլիմայ քոյր նորա. և անտի՝ յետ երեսուն ամաց ծնան զԱբէլ և զԱբելուհի, քանզի Եւայ երկուս երկուս ծնանէր. և ծնաւ հնգետասան ծնունդս: Ադամ փառաւորէր և պատուէր զԱստուած պատարագօք պատուականօք, զոր տեսեալ և ուսեալ զաւակացն զնոյնն առնէին: Կայէն երկրագործ 'ի բերոց երկրի զանպիտան մատուցանէր ընծայ Աստուծոյ. իսկ Աբէլ հովիւ զընտիրսն 'ի հօտիցն հանէր ողջակէզս առաջի տեառն. Ընկալաւ Աստուած զառատութիւն կամացն Աբելի, և խոտեաց զկարկամ կամս Կայենի. վասն որոյ նախանձեալ սպան զԱբէլ լԹ ամեայ, և ինքն անիծաւ յԱստուծոյ անբերութեամբ պտղոց՝ պխակոտեալ և դողդոջեալ: Ծնաւ Կայէն զԵնովք. և նա զԳայերիդատ. և նա զՄայիէլ. և նա զՄաթուսաղայ. և նա զՂամէք. և նա զՅովբաղ, որ արար զերգս և զքնարս. և Նոյեմի քոյր սորա զհիւս և զմնգոյրս. և Թոբէլ եղբայր նորա դարբին և պղնձագործ. զի նոքա սկսան քաղաք շինել:



Ամք աշխարհի:

Ադամ և Եւայ՝ լեալ ամաց 230 ծնան զՍէթ՝ որդի մխիթարութեան: Սէթ և Ազովրայ լեալ ամաց 205 ծնան զԵնովս: Սեթայ որդիքն գունագեղք և կարճամէջք և կուավեզք էին, իսկ Կայենին մեւելերեսք, բայց ճաւճք: 230

Ենովս և Նոյեմայ՝ լեալ ամաց 190, ծնան զԿայնան: 435

Այս Ենովս յուսացաւ կոչել զանուն տեառն՝ և եղև բնական օրինօք առաքինի: Սա եդ անուանս մոլորակաց, վասն այսորիկ կոչեցաւ նա Աստուած, և որդիք նորա՝ որդիք Աստուծոյ. իսկ Կայենին՝ դստերք մարդկան: Սա արար գիր առաջին և ուսոյց ծննդոց իւրոց: Յեղբարց սորա և որդւոց անձինք 500 յիշեցին զկեանս դրախտին և ելին 'ի լեառն Ահերմոն պահել զկուսութիւն. և այսու պատճառաւ կոչեցան որդիք Աստուծոյ: 625

Կայնան և Մաղալէթ լեալ ամաց 170 ծնան զՄաղաղիէլ: 795

Մաղաղիէլ և Դինա լեալ ամաց 165 ծնան զՅարեդ: 960

Յարեդ և Բառաքայ լեալ ամաց 162 ծնան զԵնովք: 1122

'Ի 41 ամին Յարեդի ձանձրացեալ որդիքն Սեթայ իջին 'ի լեռնէն և եկեալ յազգս իւրեանց խնդրեցին կանայս. և նոքա՝ բարկացեալ իբրև ուխտազանցից Աստուծոյ, ոչ ետուն. իսկ նոցա գնացեալ առ որդիսն Կայենի՝ զնոյն խնդրեցին. և նոքա խնդացեալ առաջի արարին զգեղապչուչ դստերս իւրեանց: Եւ այս եղև պատճառ որդոցն Աստուծոյ խառնելոյ ընդ դստերս մարդկան յետ 500 ամաց կուսութեան: Յետ հազար ամաց ելիցն Ադամայ 'ի դրախտէն՝ որդիքն Կայենի եդին իւրեանց թագաւոր զՍամիրաւս անուն, իսկ որդիքն Սեթայ՝ զԱզաւրոս: Սա եգիտ զԹիւ կենդանակերպիցդ և մոլորակացդ. և 'ի նմանէ անուանեցաւ քաղդէու-

թիւն, որ է հմայութիւն աստեղաց: — Արդ թուեն վիպագիրքն այսպէս.

Սամբրաւս՝ շարս Ժ. Աղապարոս՝ շարս Գ. Ամեղոն՝ շարս ԺԳ. Ամմենոմփն՝ շարս ԺԲ. Ամեգաղարոս՝ շարս ԺԸ. Դաւոնոս՝ շարս Ժ. Եւդորաքոս՝ շարս ԺԸ. Ամեփսինոս՝ շարս Ժ. Ոտիարդէս՝ շարս Ը. Քսիսութրոս՝ շարս ԺԸ. Այս տասն թագաւորք և շարս 120, որ են 2043 բիւրք ամաց, (զի մի շարն 120 ամ համարի): Աղաւրոս՝ ամս 97, աւուրս 290. Աղեփարոս՝ ամս 49, աւուրս 215. Ամիոն՝ ամս 128, աւուրս 80. Ամմնոն՝ ամս 118, աւուրս 118. Ամակաւրոս՝ ամս 195. Դաւոնոս հովիւ՝ ամս 98, աւուրս 80. Տաւրքինոս՝ ամս 175, աւուրս 195. Մամփսիոս՝ ամս 195, աւուրս 230. Աւտիարտոս՝ ամս 78. Քսիսութրոս՝ ամս 175: — Այս տասն թագաւորացս 1180 ամք: Որքա յառաջ քան զջրհեղեղն:

1287 Ենովք և Յադներ լեալ ամաց 165 ծնան զՄաթուսաղայ: Սա արար նշանագիրս կարճոստունս և բազմատարըս և գրեաց զանուանս ամենայն իրաց, զորս եդեալ էր Ադամ: Գրեաց զվարս և զկեանս առաջնոց: Ստացաւ զվարս առաքինիս և զմարգարէութիւն: Գիտաց, թէ երկու անգամ անցանելոց է աշխարհ վասն մեղաց՝ ջրով և հրով. և գրեաց զգիրս իւր 'ի պղնձի տախտակ և 'ի թրծեալ աղիւս կաւէ, զոր յետ ջրհեղեղին Արփաքսաթ եգիտ 'ի Սիդրոնի լերին. և այնու իմաստասիրեցին Քաղդէացիք և Ասորիք:

1454 Մաթուսաղայ և Յեդնայ լեալ ամաց 187 ծնան զՂամէք:

1640 Ղամէք և Բեդնայ լեալ ամաց 188 ծնան զՆոյ: — Առա բազմացան չարիք 'ի վերայ երկրի՝ ուտել և ըմպել, անխըտիր խառնակել, և անողորմ սպանանել. զի հնարեցաւ սատանայ բառնալ զազգս մարդկան յերկրէ: Իսկ խնամքն Աստուծոյ 'ի բազում խառնիճ՛ն գոյացոյց զհսկայսն յաղթանդամս և ուժեղս, խաւլք և պղծագործք, որք 'ի հասակս իւրեանց նայելով անմահս կարծեցին զինքեանս յաւիտեան:





Նոյ և Նոյեմզարայ լեալ ամաց 500 ծնան զՍեմ, ըզՔամ և զՅաբեթ: Ողորմելով մեղաւորացն՝ ետ Տէր ժամանակ ապաշխարութեան զ100 ամն շինութեան տապանին և վասն անդարձութեանն կարճեաց զ20 ամն: Իսկ պատճառ բազմակնութեան նախահարցն այս էր. զի փոխանակ գրոյ օրէնք լինիցին զաւակացն, և զի բազում որդիս ծնանիցին և լցցի աշխարհ: 2140

Սեմ և Գիզակղերաթ լեալ ամաց 100 ծնան զԱրփաքսաթ: Յետ ջրհեղեղին եղև որդի Նոյի Մանիտոն անուն. և ետ նմա Նոյ զխոստունս ծնկացն Ադամայ: Նա եգիտ ըզհաւահմայութիւնն, և եղև հայր Բիւրիտանացւոց. իսկ քուեր սորա Աստղկայ ետ (Նոյ) զերջանիկն Արաբիա. և յայնմհետէ կանայք ժառանգեն զնա: Անտի են դշխոյն: 2240

Ետ Նոյ Սեմայ զաշխարհն Ասիա, որ աւի աստուածայինն. 'ի Կարմիր ծովէն և յԵւիլայ և 'ի Պաղեստինոյ և յԱսորւոց մինչև ցՊարթևս և ցՎրկանս և ցծովն Կասպիական, և զամենայն արևելս Սինեցւոց: Տայ նմա և զոսկերս նախաստեղծին, որով տեսանէին զլոյս 'ի տապանին, որպէս Յովհաննէս զՔրիստոս յորովայնին, և Յունան 'ի փոր կիտին, և երեք մանկունքն 'ի հնոցին, և Դանիէլ և Լուսաւորիչն 'ի գբին: 'Ի բռնանալն Քամայ 'ի վերայ նորա՝ տարեալ թաղէ մարգարէութեամբ զԱդամայն 'ի Գողգոթայ և զԵւային 'ի Բեդղահէմ:

Նոյ ետ Քամայ զԼիբիա, որ ասի Լիբաժէն: Զի քսան եւ չորս կերպատ է աշխարհս եւ չորեքտասաներորդն Լիբիա է, որք են Քուշացիք: Եւ է սահման նոցա յՌինոկուրարայ մինչեւ ցԳադիրոն, ընդ հարաւ Եգիպտոս եւ ամենայն Հնդկաստան, եւ Եթովպիայքն մինչեւ 'ի լեառն Լուսին, եւ ծովն Հնդկաց մարգարտաբեր:

Իսկ Յաբեթի ետ զԵւրոպիա, որ ասի մասնեալ. սկըսեալ յԵմաւոն լեառնէ ընդ հիւսիս՝ զգնացս լերինն Կովկասու, 'ի Պատամիտոս գետոյ մինչեւ յԱշլոն, կցորդելով 'ի սոսա զամենայն արեւմուտս եւ զծովն Ադրիական:

2375 Արփաքսադ եւ Արուխա լեալ ամաց 135 ծնան զԿայինան: Կայինան եւ Սեքայ լեալ ամաց 120 ծնան զՍաղայ: Կայինան եգիտ զկախարդելն աստեղց եւ բազմացոյց զքաղդէութիւն. վասն որոյ որդիք նորա Աստուած համարեալ պաշտեցին զնա: Մովսէս վասն այն չյիշէ զնա, զի սա է սկիզբն կռապաշտութեան, որ ասաց բախտ եւ ճակատագիր:

2505 Սաղայ եւ Սերուքայ լեալ ամաց 130 ծնան զԵբեր, յորմէ Եբրայեցիք կոչեցան. եւ զԵկտան, որ իմացաւ զաղեղն եւ զուսեր եւ զամենայն գործս պատերազմականս. իսկ նեղեալքն 'ի նոցանէ հնարեցան զզրահս եւ զսաղաւարտըս, զբերդս եւ զպըրս ինքնափորս:

2638 Եբեր եւ Ազուրայ լեալ ամաց 133 ծնան զՓաղէկ: Ժողովեալ ամենեցուն վիճէին ընդ միմեանս՝ անհաւան լեալ վճռակացն Նոյի: Դարձեալ բաժանեցին զերկիր ըստ բազմին եւ ըստ սակաւուն եւ անկան 'ի նզովս Նոյի: Եւ ապա միաբանեալ խորհեցան ելանել 'ի դրախտն, եւ ոչ կարացին վասն շրջափակութեան ծովուն: Եւ երկուցեալ յԱստուծոյ 'ի կրկին ջրհեղեղէ՝ ասեն. — «եկայք շինեսցուք աշտարակս եւ յերկինս ելցուք»:



Փաղէկ եւ Զխարայ լեալ ամաց 134 ծնան զՌագաւ: 2772
Եկեալ 72 իշխանք աշխարհի 'ի դաշտն Քաղանէ եւ գըլխաւոր նոցա՝ Հայկն, Լամուր եւ Նեբրովթ, որ է Բէլ՝ բարձրացուցին զաշտարակն զամս 40. ոսկւով եւ արծաթով եւ ակամբք լուսաւորօք զարդարեցին զպատուհանս նորա, մինչեւ հասին յօդն ործկուտ եւ մըծուտ: Եւ ահա երեւեալ հրեշտակն Միքայէլ՝ ասէ հրամանաւն Աստուծոյ. «Դադարեցէք 'ի գալոյ առ իս, զի ոչ կարէք. այլ 'ի լըման ժամանակի ես գամ առ ձեզ, եւ տամ ձեզ սանդուխք յերկինս ելանել»: Եւ այս ոչ է անհաւատալի. զի ամէն զաղանն հրեշտակ էր, որ ուսուցանէր մարդկան զամենայն հընարս կենցաղավարութեան: Իսկ իբրեւ չանսացին հրեշտակին՝ հողմով հզօրոյն հոսեաց զաշտարակն եւ հրով դըրախտին զմայլեալ՝ խառնեաց զլեզուն 72 ձայնս 'ի պատճառս իմաստից եւ գեղեցկաբանութեանց. — որպէս հելլենն փափկական եւ հռովմայեցին սաստկական, հոնն սպառնական եւ ասորին աղաչական, պարսիկն պերճական եւ ալանըն գեղեցկական, գութն ծաղրական եւ եգիպտացին խարխափական, հնդիկն ճճուողական եւ հայն համեմական. բայց բուն՝ լեզուն արայն, մնաց առ Եբերայ, զոր 'ի յարութեանն այնու խօսիմք: Եհաս որդւոցն Սեմայ 25 լեզու եւ 37 աշխարհ. Քամայ 32 լեզու եւ 7 մեծամեծ աշխարհ. Յաբեթի 15 լեզու եւ 12 բնաշխարհ:

Իսկ Բէլ 'ի վաթսնամանգնեան հասակին իւր հպարտացեալ՝ հնազանդեաց իւր զամենայն ազգս եւ ետ պաշտել զինքն, բաց 'ի Հայկայ քաջէ, որ ութ եղբարբք իւր եւ 300 ոգւովք գայ բնակէ 'ի Հայք 'ի Հարք գաւառի, եւ զեղբարըս իւր ցրուէ 'ի Տրապիզոնէ մինչեւ 'ի Գաղատիա եւ 'ի Դարբանդ: Եւ ինքն սպանանէ նետիւ զՆեբրովթ, տիրելով

Գարդմանայ և Առանայ, Մուղանայ և Ատրպատականի, Մարաց և Մծբնայ, Միջագետաց և Մելտինոյ, Կոկիսոնոյ և Կեսարիոյ, Կողոնիոյ և Սպերոյ, Խաղտեաց և Բարթլոյ, Սանեթոյ և Կովկասու՝ ընդ միջոցս այսց աշխարհաց: Իսկ 'ի քակել աշտարակին և 'ի ցրման ազգացն յաշխարհս իւրեանց, որ օր յերկիրն մտին՝ զայն տարեմուտ կարգեցին:

2907 Ռագաւ և Սուրայ լեալ ամաց 135 ծնաւ զՍերուք, որ շինեաց զՍրուճ: Իսկ Արմենակ որդի Հայկայ բնակէ 'ի լեառնամէջ դաշտի և անուանէ զլեառն Արագած: Բայց Բէլ թագաւորէ ամենայն Ասիաստանի բաց 'ի Հնդկաց՝ ամս 62. և զկնի նորա թագաւորք 36 զամս 1300. վերջինն Սարդանապալոյ էր, որում քարոզեաց Յովնան: Իսկ 'ի 15 ամին Բէլայ թագաւորեաց Սիկիոնացոցն Եգիաղեւս, և այլ ևս թագաւորք 26 զամս 958. ըստ այսմ թագաւորէ Կամբիւրոս քաղդէացի՝ ամս 85: Սա շինեաց զՇաւշ քաղաք, որ է Ասպահան. և վաճառէր զգերեալն: Նա սկսաւ ոսկեհանութիւն և արծաթագործութիւն և զինագործութիւն:

3037 Սերուք և Մելքայ լեալ ամաց 130 ծնաւ զՆաքովր: Արմայիս շինէ զԱրմաւիր և զգետն անուանէ յանուն թոռին իւրոյ Երաստոյ՝ Երասխ: Աստ թագաւորէ Սամիրամ 72 ամս. սա երիս աչս ունէր և եղջիւրս, յաղթեաց ազգին Քամայ, շինեաց բազում քաղաքս, ետ չափս և կշիռս և գոյնս ներկուածոց և նկարս տաճարաց, և դրամս և դահեկանս անուամբ կնքոյ իւրոյ, և ապրիշմագործութիւնս և պատկերս 'ի կտաւս:

3116 Նաքովր և Յեսքայ լեալ ամաց 79 ծնաւ զԹարայ: Ամասիա անուանեաց զլեառն մեծ Մասիս: Յայնմ ժամանակի յայտնեցան Ամազոնքն, որ է կանանց զինուորու-



թիւնք յազգէ Թորգոմայ, (որոյ) գտեալ զժառութիւն 'ի զաւրս՝ սպան զամենայն արու և արար զօրս 'ի կանանց, և եդ զաթոռն յԵլեան քաղաքի՝ և աւերէր զաշխարհ. ժողովեալ մետասան թագաւորք բարձին զնա: 'Ի Բաբելոն թագաւորեաց Արփաքսադ՝ ամս 58 [1] և Վիլաւս աթուրեցի ամս 62: Շինեցաւ Դամասկոս Յովսէկ՝ յորդոյ Արամայ: Իսկ Գեղամ շինեաց զԳեղարքունի և զԳառնի, և զՍիւնիք ետ Սիսակայ:

Թարայ և Յեղնայ լեալ ամաց 70 ծնաւ զԱբրահամ: 3186
Իսկ Հարմայ և որդի իւր Արամ, որով ամենայն ազգք զմեզ Արմէն անուանեն: Սա շինեաց զՄաժակ, որ յետոյ Կեսարիա անուանեցաւ: Աստ առաջին հարստութիւն Եգիպտացւոցն, Մենէս Թինացի և սորա եօթն որդիք ամս 258. սոցա վերջինն Դարեհ, զոր սպան Աղեքսանդր: Մելքիսեդեկ քանանացի քահանայ Աստուծոյ շինեաց զԵրուսաղէմ: Իսկ Նինոս զԱթուր Նինուէ կոչեաց: Շինեաց Շամիրամ զՎան 'ի Հայս, և հարթեաց զհող երկրին Ասորոց վասն ջրհեղեղաց և զԱբրահամ աշխատեցոյց 'ի գործն: Իսկ 'ի բազմանալ կռոցն առաքեաց Աստուած հողմ, և ցրուեալ զկուռսն՝ կործեաց 'ի տեղիս. և արար հողաբլուրս 'ի վերայ նոցա, զոր Թէլ անուանեն: Զայս խնացեալ Շամիրամ շինէ բերդս 'ի վերայ նոցա, վասն այն դեղերին կախարդքն 'ի բերդս աւերս և 'ի բլուրս հողէ: Աբրահամու մօրն՝ Մալքաթայ և Սառային՝ Զմրութայ:

Աբրահամ և Սառայ. սա հնդետասանամեայ խնդրեաց 3286
զԱստուած և 'ի վաթսուն ամի ետես զԱստուած և ասէ. «Ահա գտաք զԱստուած, աւրհնեալ է տէրութիւնդ քո. և

[1] Այլ օր. ամ 18:

փառք քո լցցէ զամենայն երկիր»: Եթող նա զկինն 'ի Քաղդէացոցն և զորդին Ովրեստէս. յութսուն և 'ի վեց ամին ծնաւ զԻսմայէլ 'ի Հագարայ, յորմէ սերեցան Տաճիկք: Կղեմ ասէ, թէ յառաջ քան զԱբրահամ կայր թլփատութիւն 'ի կողմանս հարաւոյ արուաց և իգաց. վասն այնր 'ի 99 ամին ետ նմա Աստուած ուխտ թլփատել զարուս: 'Ի հարիւր ամին ծնաւ զԻսահակ. և 'ի 148 ամին առ կին զԿենդուրայ և ծնաւ վեց որդիս՝ զԵմրան, զԵսկան, զՅեկտան, զՄադիան, զԵսբոգ և զՍովէ: 'Ի սոցանէ են Պահլաւքն և Մոգքն, Խուժայիքն և Թաթարքն, որ է Մուշկ: Աստ Արայն գեղեցիկ սպանաւ 'ի Շամիրամայ:

3346 Սահակ և Ռեբեկայ լեալ ամաց 60 ծնան զՅեսաւ, յորմէ Եդովմայեցիք, որ արդ ասին Փռանկք, և զՅակոբ, որ Իսրայէլ կոչեցաւ: Աստ Անուշաւանն տիրէ հայրենեաց իւրոց՝ Հայոց, հրամանաւ շուայլն Շամիրամայ: 'Ի սոյն թագաւորէ Արգիացոցն Ինաքոս, դուստր Ովյ, և այլ 13 թագաւորք զամս 544: Իշխանացաւ յԵգիպտոս Ապիս, որ է Սարապիս, և աստուած կարծեցաւ:—Նէեմիս եգիտ զարհեստ բժշկութեան 'ի Մեմփիս քաղաքի:

3434 Յակոբ, Լիա, Ռաքէլ, Բալլայ, Զելփայ, ութսունևութ ամաց լեալ՝ ծնան զՅուդայ և զեղբարս նորա: Փորոն թագաւոր Եգիպտացոց ետ օրէնս և դատաւորս: Ասիա՝ դուստր Կրօնոսի կոչեաց զաշխարհն Ասիկէ: Աստ Պարէտ Հայկազն: Յովսէփ եօթնևտասնամեայ վաճառեցաւ. երեքտասան ամ 'ի բանդին. 150 ամաց մեռաւ: ԶՅակոբ մինչ 'ի թաղումն տանէին՝ զգլուխն 'ի վեր կալեալ օծեալ արձանին ողջոյն ետ:

3482 Յուդայ ամաց 48 ծնաւ զՓարէզ և զԶարայ 'ի Թամարայ: Աստ Արբոկ: Եւ թագաւորեաց Աթենացոցն Կեկրոփս և այլ 38 թագաւորք զամս՝ 873: Սա շինեաց զԱթէնս անուամբ կնոջ իւրոյ, և զենակիչս Մեմփացոց բերեալ՝ յԱթէնս բնակեցոյց. սերմանեաց զիմաստութիւն և զմէջերկրեայս Կապադովկիա անուանեաց: Աստ էր Յովբ արդարն. 41 ամաց լեալ պատերազմեցաւ ընդ նմա սատանայ. 30 ամ 'ի վիշտս կալով, եօթն 'ի հարուածս և 170 ամ յետոյ, որ են ամք 248. և եհաս յաւուրսն Մովսիսի: Ղևի 48 ամաց ծնաւ զԿահաթ: Կահաթ 63 ամաց ծնաւ զԱմրամ: Ամրամ եօթանասնամեայ ծնաւ զՄովսէս:



Փարէզ լեալ ամաց 59 ծնաւ զԵզրոմ: Աստ Զաւէն: 3541
Քաջ պատկերագիծն Դեդալեայ. որ թուէր տեսողացն շարժումն զոլ պատկերին: Մենափթիս թագաւոր Եգիպտացոցն առնէր գետասոյզ զողայն երեք ամ:

Եզրոմ լեալ ամաց 58 ծնաւ զԱրամ: Ութսուն ամ երկրա- 3599
գործութեան Իսրայելի և 225 ամ ծառայութեանն: Մովսէս տասնամեայ տուաւ յուսումն: Յանէս և Յամրէս, որք առին զորդիսն Իսրայելի և տարան հնգետասանօրեայ ճանապարհ ընդ անապատն. և շինեցին դրախտ ինքեանց հնգետասան ամ և յԻսրայելէ 980 տղայս զոհեցին դիւաց և հնազանդեալ զնոսա եդին պահապանս դրախտին. և ութսուն դևք ոչ հնազանդեցան՝ մինչև կրկին 980 տղայս այլ զոհեցին, և ապա հնազանդեցան՝ բաց 'ի շաբաթ ամսոյ:

Գնաց Մովսէս երկոտասան հազար զօրօք արագլօք և այծեմնօք յԵթովպիա. տասն ամ պատերազմեալ՝ էառ զաշխարհն և զթագուհին նոցա Թարբիս: Աստ ասեն առ Դևկալոնիւ ջրհեղեղ 'ի Թեսաղիա, և առ Փայեթոնիւ հրայրեաց յԵթովպիա, և այլ բազում ապականութիւնք 'ի տեղիս տեղիս, որպէս Պղատոն ասէ: Տան հարուածովք

պատժեաց Մովսէս զԵգիպտոս և զփարաւոն: 'Ի հինգշաբաթի եհան զԻսրայէլ և 'ի կիրակէ անցին ընդ ծովն: Ասպեղինոս ասէ, թէ նոր լեզուաւ ասացին զօրհնեսցուքն:

3644 Արամ 45 ամաց ծնաւ զԱմենադաբ: Եօթն ամիս շարժեցաւ Եգիպտոս, և ամենայն մարդ զգործն, յորում կայր՝ աստուածացոյց. զի ոչ եղ զհետ փարաւոնի: 'Ի նմին ամի կազմեաց զխորանն յօրինակ աշխարհի ամիս եօթն ըստ եօթնօրեայ գործոցն Աստուծոյ: Հարիւր քսան ամաց մեռաւ Մովսէս և թաղեցաւ իւր գաւազանաւն:

3689 Ամինադաբ լեալ 45 ամաց ծնաւ զՆաասոն: Քոյրն Նաասոնի Եղիսաբեթ տուաւ կին Եղիազարու քահանայի, յորոց ծնաւ փենէէզ. որ ապրեցաւ 370 ամ: Դաւանոս եղբայր Եգիպտոսի յիսուն դստերօքն կոտորեաց զյիսուն որդիս եղբօրն իւրոյ. միայն մնաց Լինգոս իմաստունն՝ աչացեալն յամենայն կողմանց: Փիւնիկս և Կադմոս եկեալ 'ի Փիւնիկէ արարին գիր Յունաց. 'ի սոցանէ գտաւ թուականութիւնն, զի վաճառականք էին: Իսկ աստեղաբաշխութիւնն գտաւ 'ի Զուրաստրա և 'ի Քրսարուստրա քաղդէացւոց, զի երկիրն պարզ և անամպ է միշտ: Իսկ երկրաչափութիւնն գտաւ առ Եգիպտացիսն, զի Նեղոս գետ յամենայն ամի ոռոգանէ զերկիրն, և ապանաքան ձողաչափ առնեն զանդս: Իսկ երաժշտականութիւնն գտաւ առ Թրակացիսն, զի 'ի մէջ ծովուց են՝ ուսան 'ի հնչմանէ յուշկապարկաց: Իսկ Պրամիթէս ըղդար և զկոճատն եգիտ:

3733 Նաասոն՝ քառասունևչորսամեայ ծնաւ զՍաղմոն: Եւ եկաց Յեսու իշխան յետ Մովսիսի ամս 27, և 110 ամաց կոյս մեռաւ: Սա անցոյց զԻսրայէլ ընդ Յորդանան. ձայնիւ էառ զԵրիքով. սպան զ29 թագաւորս և զերկիրն



Քանանու վիճակաւ ետ որդւոցն Իսրայէլի: Ըստ Տոլք.— իսկ Քանիդէս քանանացի եկն 'ի Հայս:

Սաղմոն երեսունևհինգամեայ ծնաւ զԲոոս 'ի Հռաքաբայ: Ըստ փիլարտոսն բարուախօս ամենայն կենդանեաց. և արխապադոսն շինի յԱթէնս: Գոթոնիէլ ամս 40: Աւովդ յերկուց ձեռաց յաջողեալ: Եւ Սամեգար, որ սպան 'ի փղշտացոցն զհարիւր այր մաճիւն ամս 90: Ըստ Հաւանակ, Վաշտակ, Հայկակ, Ամբակ, Առնակ: Ծառայէ Իսրայէլ այլազգեացն ամս 18: 3768

Բոոս հարիւրութամեայ ծնաւ զՈվբէթ 'ի Հռութայ: Դեբովրայ և Բարաք ամս 40. Գեդէոն ամս 40. սորա էին 70 որդիք: Աբիմելէք ամս 3. Թովղայ ամս 23. Յայիր ամս 22: Ըստ Շաւարշ, Նորայր, Վստամ, Կար, Գոռակ: 'Ի նոյնս Յովն սպարապետ Աթենացւոց, յորմէ Յոնք անուանեցան: Իսկ 'ի Հռոմ հարիւր իմաստասէրք 'ի միում գիշերի երազ տեսին եօթն արեգակունս, և վեցերորդն պայծառ քան զամենայն, զոր Սաբիլէ թագուհին մեկնեաց 'ի վերայ եօթն դարուցս. իսկ պայծառ դարըն, որ ծնաւ զՔրիստոս: Թագաւորեաց 'ի Թեբայիդ Ապողոն երաժիշտ, որ յերգելն շարժէր զքարինս: Այլ և Դեդաւլայ հիւսն և նկարիչ՝ զպատկերս զոր առնէր շարժուն թուեցուցանէր: Հերակլէս զԼիոն աւերէ: 3876

Ովբէթ հարիւր և մի ամաց ծնաւ զՅեսսէ: Յեփթայի ամս վեց. սա զդուստրն իւր Եղեգի՝ իւր խաչ անուանեաց և զոհեաց Աստուծոյ: Եսեբոն ամս 7. Իլոն ամս 10. Լաբդոն ամս 8. Սամսոն քաջ ամս 20: Ըստ Հրանդ, Ընձակ, Գլակ, Հորոյ, Զարմայր: Թագաւորէ Հռոմայեցւոց Ենիաս և այլ թագաւորք 16 մինչև զՌոմիլոս, որ զՀռոմ շինեաց, ամս 426: Ապա այլ թագաւորք վեց՝ ամս 3977

207։ Ապա հիպատքն, բրուտեանքն, ռամկապետքն, դիկտատորքն, հիւպատքն, մինչև 'ի Գայիոս Յուլիոս՝ ամս 460. և այլ ևս 46 ամք։

4107 Յեսսէ հարիւրևերեսունամեայ ծնաւ զԴաւիթ արքայ։ Մեռաւ Զևս, որ է Արամազդ, 'ի Կրիտէ 880 ամաց։ Փիլոն արար դասս երաժշտաց և պատկերս շարժունս։ Եմագար դատաւոր ամս 40։ Հեղի քահանայ և որդիք իւր ամս 20։ Գերեցաւ տապանակն յայլազգեաց ամիս եօթն։ Սամուէլ մարգարէ և Սաւուղ ամս 40։

4147 Դաւիթ արքայ ամս 40 և մեռաւ 70 ամաց։ Աստ Փերձն բազմակեաց։ Դաւիթ քսանամեայ սպան զԳողիաթ, և 'ի տասներորդ ամի թագաւորութեանն իւրոյ եհան զտապանակն 'ի տանէն Աբեդդարայ։ Քահանայ Աբիաթար. մարգարէք՝ Գադ, Ասափ, Նաթան։—Արար (Դաւիթ) զՂևտացին 24 դասս սաղմոսաց առաջի տապանակին։

4162 Սողոմոն ամս 40. սա 'ի չորրորդ ամին շինեաց զտաճարն սքանչելատեսիլ և կարգեաց զդասս Ղևտացոյն։ Այլ մի Աբգամանոս անուն 'ի Տիւրոսէ լուծանէր զամենայն առակս Սողոմոնի, և ինքն առնէր այլ առակս, որով տարակուսէր Սողոմոն։ Աստ էին իմաստասէրքն Հոմերոս և Իսիոդոս. մարգարէք՝ Սադովկ, Աքիայ, Սամեայ. քահանայ՝ Սադովկ, արար զերգսն։

4186 Ռոբովամ ամս եօթնևտասն։ Տասն ցեղք Իսրայէլի թագաւորեցուցին զՅերոբովամ զորդին Նաբատայ ամս 22։ Եւ Սոսակիմ եգիպտացի և կողոպտեաց զտաճարն։ Մարգարէք՝ Եուդ, Յովա, Յովէլ, Ազարիա, Անանիա։

Աբիայ ամս երեք՝ Իսրայէլի. Նաբատ՝ ամս երկու կարճաւրաց։



Ասայ ամս 41՝ Իսրայէլի. Բաասա ամս 24. Եղայ ամս 2. Զամրի ամիս 7. Ամրի ամս 12.—սա գնեաց զլեառն Սամիրոն, շինեաց քաղաք և անուանեաց Սամարիա, յետոյ կոչեցաւ Սեբաստիա, որ է Մամռուզ։ 4230

Յովսափաթ ամս 25՝ Իսրայէլի. Աքայաբ ամս 22. Ոքոզիա ամս 2։ Մարգարէք՝ Եղիա, Եղիսէէ, Յեսու, Ոզեէլ, Միքիա՝ որդի Յիմղայ։ 4255

Յովրամ ամս 8՝ Իսրայէլի. Յովրամ ամս 12՝ Իսրայէլի. յեօթներորդ ամին վերացաւ Եղիա հրեղէն կառօք յերկինս։ 4262

Ոքոզիա ամ մի։ Գոդողիա, մայր սորա, ամս եօթն Իսրայէլի. Յէու ամս 28.—սա կոտորեաց զեօթանասուն որդիսն Աքայաբու։ Մարգարէք՝ Ազարիա, Յովնադաբ՝ որդի Ռաքաբիմայ, որ այժմ են յերկրին երանելեաց։ Կարքեդոն քաղաք շինեցաւ յԱփրիկէ։ 4271

Յովաս ամս 40. քահանայ Յովիդայ, որ եդ զկորբանն 'ի տաճարին և եկաց ամս 130՝ Իսրայէլի. Յովաքազ ամս 17։ 4311

Ամեսայի ամս 29 Իսրայէլի. Յովաս ամս 16. Յերոամ ամս 41։ 4340

Ոզիա ամս 52։ Եւ Թագղաթբասար և գերեաց զՅուդայ և զԵրուսաղէմի մեծ մասն, և այս սկիզբն գերութեանն Իսրայէլի։ 'Ի 49 ամին Ոզիայ եղաւ առաջին ողոմպիադն։ Իսրայէլի՝ Զաքարիա 6 ամիս. Սելում 45 օր. Մանայեմ ամս 10.—սա ետ զմի յոկի երինջոյն սակս հարկի՝ Փուայի արքայի. Փակէէ ամս 10։ Մարգարէք՝ Անանիա, Ովսէէ, Ամոս, Յովէլ, Եսայի, Յունան, Նաւում։ Աստ թագաւորէ Մարաց Վարբակ և այլ 8 թագաւորք ամս 270. սոցա վերջինն Աժդահակ էր, զոր սպան Տիգրան հայ։ 'Ի սոյն աւուրս թագաւորեն Քաղդէացիքն, որ Բա- 4392

բելացիք կոչին։ փուայ (և այլ) երեքտասան թագաւորք ամս 200 մինչև ցԴարեհ Արշաւիր, զոր սպան Տիգրան։ Եւս թագաւորեն Մակեդոնացիք, Կարանոս և այլ 40 թագաւորք ամս 647։ Սոցա վերջինն սուտ Փիլիպոսն էր։ Դարձեալ թագաւորեն Լիդացիք, Արդւսայ և ինն թագաւորք 230 ամ։

4408 Յովաթամ ամս 16՝ Իսրայէլի. Փակէէ ամս 20. Աքազ ամս 16. Ովսէէ ամս 9։ Եւս գերեաց Սաղմանասար զԻսրայէլ և երարձ զթագաւորութիւնն։ Մարգարէ՝ Միքիա յերկոտասանիցն։ Իսրայէլի կացին թագաւորք 19 ամս 250։ Եւ առաքեաց Սաղմանասար չորս ազգս կառօք Իւրեանց պահապանս Սամարիայ. իսկ 'ի սատակել զնոսա գազանացն առաքեաց զքահանայն Եզր և զհինգ գիրս Մովսէսի ասորերէն։

4453 Եզեկիա ամս 29։ Եւ Սենեքարիմ 'ի վերայ Հրէաստանի....[1] և սատակեցաւ 185 հազարաւն։ Ռոմիլոս ըզՀռոմ շինեաց և Բիւզաս իշխան զԲիւզանդիոն, զոր յետ 970 ամի Կոստանդիանոս մեծապէս շինեաց։ Եւս Արբունն։

4508 Մանասէ ամս 55. սա ասաց «զՏէր ամենակալն» 'ի Նինուէ 'ի գերութեանն և արձակեցաւ։ Եւս Բագուկ։ Ամոն ամս 12. Յովսիա ամս 31։ Եւս Հոյ, Յուսակ։ Մարգարէք՝ Խուլդիայ, Երեմիա, Սոփոնիա։ Եւս Տուբիթ և Տուբիա՝ փեսայ Հռագուէլի։

4551 Յովաքազ ամս 3. զսա գերի տարաւ Նաքաւով փարաւոն կաղ։ Եւս Կայպակ, Սկայորդի։ Եղիակիմ որ և Յովակիմ ամս 12։ Նաբուգոդոնոսոր զՀրէաստան հնազանդեաց և հարկ եդ։ Յովակիմ, որ և Յեքոնիա՝ ամս 3։ Եւս թագաւորէ 'ի Հայս Պարոյր առաջին և այլ 19 թագաւորք. — սոքա բարձան յԱղեքսանդրէ։ Մարգարէք՝ Բարուք, Մատթանի, որ և Սեդեկիա ամս 11։ Հայոց՝ Հրաչեայ, Վրաց առաջին թագաւոր Փառնաւազ, որ 'ի վեց լեզուէ արար զվրացերէնն, նա և զգիր նորա։ Եկն Նաբուքոդոնոսոր պաշարեաց զԵրուսաղէմ և էառ զնա, և կուրացոյց զՍեդեկիա. և յետ եօթն ամաց Նաբուզարդան զահճապետն այրեաց զտաճարն։

[1] Տառքն. պակասին բառք ինչ։





Յեքոնիա 37 ամ 'ի բանտին 'ի Բաբելոն ծնաւ զՍաղաթիէլ։ Յութն ամի գերութեանն մարգարէք՝ Դանիէլ երեք մանկունք, Եզեկիէլ. իսկ 'ի 38 ամի գերութեանն մարգարէք՝ Անգիա, Զաքարիա, Ամբակում, Մաղաքիա, Սաղաթիէլ, Եզր, որ Հոգւով սրբով գրեաց 'ի միտաց զամենայն գիրս աւրինաց և մարգարէից։ Իլմարովդաք արքայ եհան զՅեքոնիա 'ի բանտէն, զհետ նորա Բաղտասար, որ ետես զձեռնն հրեղէն, որ գրեաց յորմն գերիս գիրս՝ մանէ, թակեղ, փարէս, զոր մեկնեաց Դանիէլ, որ և ետես զտեսիլ չորից գազանացն։ Եւս Փառնաւազ, Պաճոյճ, Կուռնակ։ Փիրամ արքայ Նուայ եկաց ամս 30. սա էր յաւուրս Դաւթի։

Սաղաթիէլ լեալ ամաց 56 ծնաւ զԶօրաբաբէլ։ Եւս յերկրորդում ամի Դարեհի մարի լցաւ առաջին եօթանասներորդ ամ գերութեանն, և արկաւ Դանիէլ 'ի գուբ զառաջինն և ետես զտեսիլ եօթներորդաց եւթանասնից։ Եւս Դարեհ Արշամայ, առ որ գրեաց Զօրաբաբէլ, եթէ քան զամենայն զօրաւոր ճշմարտութիւնն է։ Եւս Կիւրոս պարսիկ զամս երեսուն։ Սա սպան զերիս մանկունսն, և կրկին արկաւ Դանիէլ 'ի մէջ եօթն առիւծուց 'ի գուբն։ Կիւրոս

նա զԱղամանդաւր հանդերձապետն Յուդայ զ4469 անօթըս ոսկեղէնս և արծաթեղէնս 'ի սպասուց տաճարին, և զհինգ բիւրս 'ի Հրէից արձակեաց 'ի 17 ամի թագաւորութեան իւրոյ, որք եկեալ հիմն արկին տաճարին. բայց անկատար մնաց վասն շրջակայ ազգացն: Իսկ յ30 ամին Միշաայէն եւ Զօրաբաբէլ յԵրուսաղէմ և շինեաց զտաճարն զամս չորս. և ատ լցաւ երկրորդ եօթանասուն ամ գերութեանն Իսրայելի և սկսան եօթներորդքն Դանիելի: 'Ի Զօրաբաբելէ ցՅուդայ Մակաբէ 332 ամք են. 'ի Յուդայէ ցծնունդն Քրիստոսի 151 ամք: Եօթներորդքն Դանիելի եօթանասուն և կէս ամք են: Իսկ մի կէսն Քրիստոսի 34 ամք են: Քահանայ՝ Յեսու, որդի Յովսեդեկեայ: Տմուրիս բամբիշն Մասագեցոց սպան զԿիւրոս: Իսկ Յուդիդ բեդաղուացի սպան զՀողեփեռնէս Թաթար Թուրք:

4680 Զօրաբաբէլ լեալ ամաց 56 ծնաւ զԱբիուդ: Ըստ Արտաշէս երկայնաբազուկ, որ 'ի հինգերորդ ամին իւրոյ առաքեաց զԵզր քահանայ շինել զպարիսպն Երուսաղեմի. ատ Եզր որոշեաց զՀրէայսն և զլաբելացի արս և կանայս: Իսկ 'ի քսաներորդ ամին արձակեաց Արտաշէս զՆեեմի տակառապետն օգնական Եզրի: Սա եգիտ զհուրն 'ի ջրհորին, որ վառեցաւ տիղմն յետ 70 ամաց: Ըստ Մուրթքէ հաւատարիմն և Եսթեր փոքրիկ աղբիւրն:— Վայս զհամանն ամաղեկացին: Քահանայք՝ Յակիմոս և Եղիաբիսոս: Ըստ Փառոս, Հայկակ, Երուանդ, Տիգրան, Բաբ:

4727 Աբիուդ լեալ ամաց 47 ծնաւ զԵղիակիմ: Ըստ Տիրան, Վահագն, Առաւան, Ներսէհ: Քահանայ՝ Յուդայ:

4787 Եղիակիմ լեալ ամաց 60 ծնաւ զԱզովր: Ըստ Զարեհ, Արմոգ, Բագամ, Վան, Վահէ, զոր սպան Աղէքսանդր:





Ազովր լեալ ամաց 32 ծնաւ զՍադովկ: 4826

Սադովկ լեալ ամաց 31 ծնաւ զԱքին: Քահանայք՝ 4857
Յովհաննէս, Յադդուա: Ըստ Պղատոն և Արիստոտէլ բատագիրացի. իսկ Աղէքսանդր մակեդոնացին տիեզերակալեալ և զերեսուն և հինգ թագաւորս կորոյս յաշխարհէ. Մակեդոնացւոց 40 թագաւորք են յետ և յառաջ Աղէքսանդրի զամս 647: Ըստ երկու թագաւորք ասիացւոց՝ Անտիգոնոս ամս 18 և Դեմետրոս ամս 17: Ընդ սոսին թագաւորեցին Պտղոմեանքն յԵգիպտոս, որք ասպարիզօք չափեցին զերկիր՝ զընակութիւն մարդկան. 12 թագաւորք ամս 296:

Աքին լեալ ամաց 34 ծնաւ զԵղիուդ. քահանայք՝ 4889
Ոնիա, Սիմէոն արդարն, Եղիազար: Ըստ 72 թարգմանիչքն հրամանաւ Պտղոմեայ զգիրս Եբրայեցւոցն 'ի յոյն լեզու փոխադրեցին: Սիմէոն ծերունի: Ըստ թագաւորէ Ասորոց և վերին կողմանցն Բաբելացւոց Սելեւկիոս ամս 38. թագաւորք 17 զամս 244. 'ի սոցանէ ապստամբեաց Արշակ քաջ 'ի Բահլ քաղաքէ ամս 31. թագաւորք 13 զամըս 454:

Եղիուդ լեալ ամաց 30 ծնանի զԵղիազար. քահանայք՝ 4919
Մանասէ, Ոնիայ, Շմաւոն, սորա որդի է Յեսու Սիրաքայ խրատագիր՝ նմանեալ Սողոմոնի:

Եղիազար լեալ ամաց 62 ծնաւ զՄատթան. քահա- 4981
նայք՝ Ոնիայ, Յեսով, Մենեղաւոս, Ալկիմոս. առ սոքօք Անտիոքոս թագաւոր բռնադատէր զՀրէայսն թողուլ զօրէնս. յորմէ չարչարեցին Եղիազար ծեր քահանայ և եօթն որդիքն Թոդասայ և Շմաւոնի՝ Ակար, Մակար, Խորէն, Խորսէն, Ադինադար, Թարսիս և Գադիդէ. առ որովք Մատաթիա քահանայ 'ի Մովդէիմ գեղջէ և Յուդա Մակաբէ և վեց եղբարք նորա զինեալք և սպառազինեալք հա-

Ամք աշխարհի։

լածէին զզօրս Ասորոց։ Աստ Արտաշէս, Արշակ մեծ, որ թագաւորեցոյց Հայոց վերայ իւր Վաղարշակ ամն 22. մեռեալ 'ի Մծբին։

5020 Մատթան լեալ ամաց 38 ծնաւ զՅակոբ. քահանայք՝ Յովնաթան ամն 10. Շմաւոն ամն 9։ Աստ Վաղարշակ թագաւորէ 'ի Հայս. թագաւորք 26 զամն 562։

5080 Յակոբ լեալ ամաց 60 ծնանի զՅովսէփ. քահանայք՝ Արիժոն ամն 8. սա առաքեաց 'ի Հռոմ վահան ոսկի և ետ բերել տախտակ պղնձի 'ի նշան ուխտի. Հիւրկանոս ամն 26. Արիստաբուլոս ամ մի։ Սա 'ի վերայ քահանայութեան թագ եդ։ Աստ Արշական, Արշանակ, Արշէզ. իսկ 'ի Հայս՝ Արշակ, Արտաշէս, Տիգրան, Արտաւազ սակաւակեաց։

5198 Յովսէփ աստուածահայրն 41 ամաց էր, յորժամ ծնաւ 'ի Մարիամայ տէրն մեր Յիսուս Քրիստոս 'ի Բեթղեհէմ։ Քահանայք՝ Յոհաննէս ամն 27. Աղէքսանդրիա կին ամն 9. Հիւրականոս ամն 34։ Աստ թագաւորէ Հերովդէս այլազգի, յորոյ յերեսուներկու ամին ծնաւ Քրիստոս, Աւգոստոսի 42, Արշաւրայ 21։ Հայոց Արշամ, որ հարկեաց Հռոմայեցոց, և Աբգար։

ՅԱդամայ մինչև 'ի ջրհեղեղն են ամք 2262. անտի մինչև յԱբրահամ ամք 1019. անտի մինչև յելն Իսրայէլի յԵգիպտոսէ ամք 430. անտի մինչև 'ի Սողոմոնի շինած տաճարին ամք 480. անտի մինչ 'ի Զօրաբաբելի շինած տաճարին ամք 477. անտի մինչև 'ի ծնունդն Քրիստոսի 530. միանգամայն ամք 5198։

Մինչև ցայս վայր առաջնորդ ունելով զնախապետս և զթագաւորս՝ շարայարեցի 'ի նոսա զվիպանիսն պատմութեանցս, համառօտելով զմի 'ի հազարաց. իսկ յայսմ հետէ անկայ 'ի ծովս խորհրդոց, զի ամենայն աշխատութիւնք մեր վասն Հայաստան ազգիս և աշխարհիս պատմութեանց են. սակայն զի ոչ են 'ի բնէ ինքնակալ իշխանք և թագաւորք մեր, հարկ է զի ընդ որոց ձեռամբ անկեալ կան, զնոցուն թագաւորսն շարայարել, որպէս զի մերն ամբողջ կալցի զկարգն։ Արդ որպէս 'ի սկզբանն 'ի Հայկայ հետէ հնազանդեցան Հայք Ասորոց, յետոյ Մարաց, Պարսից, Մակեդոնացոց, Արշակունեաց, Տաճկաց, Թուրքաց և այժմ Թաթարաց, սոյնպէս և երբեմն Հռոմոց, յետոյ Յունաց, այժմ պարտ է զՀռոմն կարգաբանել և զՊարսիկս։

Միածին Որդին 'ի Հօրէ՝ եղև միածին 'ի մօրէ՝ 'ի Մարիամայ աստուածածնէ։ Ութօրեայ թլփատեալ 'ի բազուկս Յովսեփայ 'ի Զաքարիայ քահանայապետէ, քառասնօրեայ 'ի տաճարն ընծայեալ՝ 'ի Սիմէոնէ և յԱննայէ գոհաբանեալ, որպէս 'ի մոգուցն պատարագօք պատուեալ, երթեալ յԵգիպտոս և 500 բիւր կուռս կործանեալ, և զպալատանին[1] պատճառն պատմութեան իւրոյ թողեալ՝ դարձեալ և 'ի Գալիլեա սնեալ, երկոտասանամեայ 'ի տաճարին վարդապետեալ, երեսնամեայ 'ի Յորդանան 'ի Յով-

[1] Այլ օր. պալատնին.

հաննէ մկրտեալ, և ծիրանի բոցաբորբ բարբառով 'ի Հօրէ և յարփիախաղաց աղաւնակերպ Հոգւոյն վկայեալ, 'ի Սատանայէ ընդ սեաւս սատանայական մրցեալ և նշանօք բազմօք բարեհռչակեալ, երկոտասան և եօթանասուն երկու աշակերտս ընտրեալ և նոքօք զտիեզերս աշակերտեալ, 'ի խանդացող Հրէից խաչեալ, և 'ի Յովսեփայ թաղեալ, ըզդժոխս աւերեալ և զորս հաւատով զնա ծանեան ազատեալ, ինքնիշխանութեամբ յարուցեալ և յայտ յանդիման յերկինս վերացեալ, զՀոգին սուրբ յառաքեալսն առաքեալ, որք զերեսուն հազարս աշակերտեցին 'ի Հրէից, և ապա ընթացան յոլորտս տիեզերաց և դարձուցին զազգըս մարդկան 'ի խաւարէ կռապաշտութեան 'ի լոյս աստըւածգիտութեան:

Թագաւորին յաւիտենից մատուցին մոգքն զընծայս խորհրդոյ, Մելքոն պարսիկ, Գասպար հնդիկ, Բաղտասար արապ: Առաքեաց Աբգար առ Յիսուս գիր աղաչանաց. և նա առաքեաց նմա զպատկերն իւր՝ նկարեալ 'ի դաստառակի, զոր յետոյ Նիկիփոր տարաւ 'ի Կոստանդընուպօլիս:

34 Խաչի Յիսուս յԵրուսաղէմ՝ վասն մարդկան: Փիլոն իմաստասէր և Գաղիանոս բժիշկ:

39 Բառնաբաս զԱնտիոք դարձոյց. Մատթէոս գրեաց զաւետարանն յԵրուսաղէմ եբրայեցի բարբառով:

49 Սովն զոր ասաց Ագաբոս. Մարկոս գրեաց զաւետարանն յԱղեքսանդրիա լատին լեզուաւ:

56 Ղուկաս գրեաց զաւետարանն 'ի Հռոմ և աւարտեաց յԱնտիոք ասորի գրով. զՅակոբոս սպանին Հրեայքն և զխաչն Քրիստոսի թաղեցին: Ներոն զՊետրոս և զՊօղոս սպան 'ի Հռոմ:



Վեսպասիանոս կոտորեաց զՀրեայսն և եբարձ զքահանայութիւնն և զթագաւորութիւնն: 70

Յովհաննէս գրեաց զաւետարանն յառաջ 'ի Պատմոս, յետոյ յԵփեսոս յունարէն: 96

Երատաշէս շինէ զԱրտաշատ: Սեկունդոս լռակեաց իմաստասէր: Ժողով Նիկիոյ, որ զՍաբէլ նզովեաց: Ակիւղաս, Սիմաքոս, Թէոդոտիոն: Հինգերորդ թարգմանութիւն գտաւ յԵրիքով. վեցերորդ թարգմանութիւն գտաւ յԵմաւոս. եօթներորդ թարգմանութիւն արար Որոգինէս վեցիջեան: 89

Թագաւորէ Տրդատ և չարչարէ զսուրբն Գրիգոր ամս երկուս. և արկանէ 'ի վիրապն ամս 13. և ինքն սպանանէ զսուրբ Հռիփսիմեանս ոգիս 36 և հարեալ բարկութեամբ 'ի Տեառնէ՝ լինի խոզ աւուրս 75 և բժշկի հոգւով և մարմնով 'ի ձեռն սրբոյն Գրիգորի՝ որդւոյ Անակայ և Ոգոհեայ: Ձեռնադրի սուրբ Լուսաւորիչն կաթուղիկոս ամենայն արևելից և հիւսիոյ, և բերէ 'ի Հայս զնշխարս Յովհաննու և Աթանագինեայ՝ անձրի իւրոյ, և դնէ 'ի յԻննակնեայսն և տայ զտեղին 'ի ձեռն Զենոբայ եպիսկոպոսի: Նա արար զՏարօնոյ Պատմութիւնն, և Ագաթանգեղոս ըզՀայոցն: 287

Հաւատան յԱստուած Վիրք և Միհրան թագաւորն 'ի ձեռն Նունեայ: Ուռնայր թագաւորն և ամենայն Աղուանք 'ի ձեռն սրբոյն Գրիգորիսի, նոյնպէս և մեծն Կոստանդիանոս 'ի ձեռն Սեղբեստրոսի:

Երթան Տրդատ և սուրբն Գրիգոր 'ի Հռոմ 'ի տեսութիւն նոցա եօթանասուն հազարօք. գնեն ուխտ ընդ միմեանս երկու արքայքն՝ զարիւն Քրիստոսի խառնել 'ի մելանն, զի մի դրժեսցեն: Նստուն Հայոց զձախ ձեռն Անդ-

րեի և յԵրուսաղէմ զսուրբն Յակոբ տեղի իջևանի և զնարից կուպայն և կանթեղ մի 'ի վերայ գերեզմանին Քրիստոսի: Իսկ 'ի դառնալն 'ի Հայս հարկանէ Տրդատ զՀոնն Ճոպանաձիգ, շինէ զբերդն և զապարանսն Գառնոյ, աւերէ զՅեկրատամ, և շինէ զԳառնւեժ:

325 Ժողովն Նիկիոյ 318 հայրապետաց, որք նզովեցին զԱրիոս: Գիւտ խաչին յԵրուսաղէմ 'ի Հեղինեայ: Շապուհ յարոյց հալածանս եկեղեցւոյ յարևելս: Հովիւք թաղեցին զսուրբն Գրիգոր: Երևումն սուրբ խաչին յԵրուսաղէմ յաւուրս Կիւրղի:

352 Անդրէաս գշարագրութիւն տոմարացն յօրինէր զերկհարիւրակն: Շինէ Խոսրով զԴուին: Մովսէս և Դանիէլ 3870 արբովք կատարին 'ի Գիզանփայտն: Առաջնի ընթերցուածն: Պապ և Աթանագինէս կանամբք և որդւովք ըմպէին յեկեղեցւոջ, հուր անկեալ 'ի վերուստ անդրնդասոյզ արար զնոսա զամենեսին:

366 Սուրբն Ներսէս կարգեաց 'ի Հայս 900 իշխանս բարձի, չորս հարիւր եպիսկոպոսունս և երկու հազար վանս: Երևեցան զօրք հրեշտակաց գնալով ընդ երկինս: Ըստ աստուածաբանն, Բարսեղ, Նիւսացին, Եպիփան, որ յայտնեաց զաղանդս մինչ 'ի Քրիստոս և 'ի Քրիստոսէ մինչև ցինքն:

381 Ժողովն Կոստանդնուպօլսի 150 հայրապետաց, որք նզովեցին զՄակեդոն: Ծնաւ յԱնտոին մանուկ մի մուրվօք, չորսոտնի և չորսձեռնի: Գերութիւն մեր ազգիս 'ի Շապհոյ և ոսկերաց թագաւորացն:

402 Տեսանէ սուրբն Սահակ զտեսիլ ապագայիցն: Ըստ Ոսկի բերանն, որ արար երկոտասան հազար ճառս, որ են ութ հարիւր գիրք: Յայտնեցան նշխարք Նախավկային 'ի ձեռն



Պոնկիանոսի քահանայի: Ութաղի Աղեքսանդրացի յօրինեաց զցանկ առաքելոցն և զգործոցն: Թագաւորքն Յունաց և Պարսից բաժանեցին զաշխարհս մեր 'ի վերայ իւրեանց:

Սկիզբն դպրութեանց հայ գրոց 'ի ձեռն սրբոյն Սահակայ և Մեսրովպայ, որք վաթսուն աշակերտօք աշխատեալք թարգմանեցին զամենայն Հին և Նոր կտակարանս: Կատարեցան աշակերտքն Մաշտոցի յԱստղաբլուրն: 423

Ժողովն Եփեսոսի երկու հարիւր եպիսկոպոսաց, որք նզովեցին զՆեստոր: Սուրբն Մարութայ շինէ զՄուֆարղին և ժողովէ զ285000 սրբոց նշխարս: 431

Ժողովն Եփեսոսի վասն Փլաբիանոսի: Մովսէս հայոց պատմագիրն: 449

Բարձաւ թագաւորութիւնն Արշակունեաց և քահանայապետութիւն յազգէ սրբոյն Գրիգորի: Վերափոխումն նշխարաց Ոսկեբերանին: Յայտնեցան Անանիայքն 'ի ձեռն Մաղխութայ: Շինէ Անատոլ զԿարնոյ քաղաքն հրամանաւ փոքուն Թէոդոսի: 452

Ժողովն քաղկեդոնի վեց հարիւր երեսուն և վեց եպիսկոպոսաց, որք նզովեցին զԵւտիքէս: Գիւտ գլխոյ Կարապետին յԵմեսիա: Կատարումն սրբոց Վարդանանց: Հրայրեացք 'ի Կոստանդնուպօլիս 'ի ծովէ մինչև 'ի ծով: Մին ամիս օդ փոշի տեղեաց թիզ մի. 'ի բազում տեղիս հուր վայթեցաւ և փողանման աստղ լուսաւոր երևեցաւ զաւուրս քառասուն: Սուրբ Շուշանիկ նահատակեցաւ և Անդրէաս զՆունեայ խաչն 'ի Սպեր տարաւ: Պարտաւ շինեցաւ 'ի Վաչէէ արքայէ:

Եգիտ Գառնիկ զնշխարս սրբոյն Գրիգորի: Սուրբն Թաթուլ և Վարոս և Թովմաս: Գայի կաթողիկոս պար- 500

սից: Պիղծն Բարծումայ, որ զ7700 եկեղեցականս կոտորեաց: Վախճանել վրաց Թագաւորն զՏփխիս շինեաց: Սուրբն Սիմէոն սիւնականն: Նա Վաչագան մնշխարս սրբոցն գտանէր, և 365 եկեղեցիս շինէր: Սուրբն Շուփհաղիշոյ: Եղիշէ և Ղազար ժամանակագիրք: Նիկոպօլիս և Նիկոմիդիա կործանեցան շարժմամբ: Նա սուրբն Երիցակ: Տեառնեթագ և Վասակ և Վահան կատարին: Յակոբ սրճեցին արար 700 ճառս:

520 Աւաստ 400 կոյս աղջիկ զոհեաց Ողի կուռց իւրոց: Հուր անկեալ յԸնտիրք այրեաց զաղքունիսն և վեց օր ոչ շիջաւ: Գիւտ նշխարաց Թադէոսի առաքելոյն և Սանդխտոյ կուսին 'ի ձեռն Կիրակոսի: Բարսեղ Ճոնն յաւուրս Ներսեսի շինողի, որ եօթն անգամ եռես զՔրիստոս. սա սրբագրեաց զշարականսն, որ Ճոնընտիր կոչեցաւ: Մարդամահ սատանիկ: Նոյպէս եղև ջուրն սեղմեալ յԵրուսաղէմ հնգետասան ամս: Հուր երկնային այրեաց զբալբաք: Երևեցաւ 'ի Կիլիկիա կին մի, որ գիրկ մի երկայն էր քան զամենայն մարդ, անկեր և անխօս, և 'ի կուղպակին մի փողոտնոյր. եկաց բազում ժամանակս և անյայտ եղև: Լցաւ երկհարիւրեակն Անդրէասայ 'ի մարտի 25 և յապրիլի 4 չկարացին գնալ, ուր սկիզբն էր, զի ինն լուսինք 'ի մէջ էին: Այս խախանեցան և խնսատունք ժամանակին կարգեցին զԹուականն Հայոց:

552 Սկիզբն Թուականին Հայոց:

Արբոյն Մովսէսի կաթողիկոսի հրամանաւն՝ Տարոնացին Աթանաս 'ի Գլակայ վանաց արար զտոմար Հայոց:

Սուրբն Սոփի 'ի Յուստինոսէ հիմնարկի: Յիզտիբուզիտ նահատակի: Ջրհեղեղն զՈւռհայ տանի: Ութն ամ սով և շնթութիւն: Տէր Եզրաս կաթողիկոս Եղուա-



նից 'ի Գարբանդայ 'ի Պարտաւ գայ և դնէ զաթոռն: Եդաւ հնգհարիւրեակն յԱղէքսանդրիա յԱյասայ և յայլ 36 գիտնաւորաց, (յորում) զոր իւրոնն պատառեաց: Շարժ ահագին ընդ ամենայն աշխարհ. տարաժամ մահ և կայծակն 'ի կողմն հիւսիսոյ. վնս զԸնտիրք: Եջ սատուծային երևեցաւ 'ի սուրբ մատրանն և 'ի սուրբն Սիոն աստուածածին՝ Յիսուս 'ի գրկին: Չար և դառն ժամանակ, հնգհազար աղջիկք քրիստոնեայք կամաւ անկան յԱթլ գետ, զի առ խաքան տանէին: Նենգրացիքն կոտորեցան 'ի Գորահարէ հրէէ: Իշխանք Հայոց ապստամբեալ 'ի Պարսից՝ ձեռն եառն 'ի Յոյնս: 'Ի Գայլոսէ մինչև ցյետինն Յուստինոս 50 Թագաւորք փռանկք էին, իսկ 'ի Տիբերէ և այսր Թագաւորքն հոռոմ լինէին:

Վարդան Մամիկոնեան սպանանէ զԽոսրով պարսիկ 571
իշխանն և ինքն գնայ 'ի Կոստանդնուպօլիս, և հինգ գրիարծաթոյ դնէ զարևելեան դուռն սուրբ Սոփիին: Գրիգոր և Վրթանէս վարդապետք 'ի Յոյնս գնացին. իսկ քաջարան Ասորիք 'ի Հայս եկին՝ և երկոքին ոչինչ օգտեցան:

Սմբատ Բագրատունի գնայ 'ի Վրկանք, որ է Սագաստան, և գտանէ հայք մնացեալ գերու, և կարգէ եպիսկոպոս նոցա զՀաբէլ:

Սարքայ նոսի կաթողիկոս 'ի Վիրս առանց պատրիարգին Ընտիրքու:

Խաւարեցաւ կէս արեգական 10 ամիս:

Եղև Մահմէտն: 611

Երկոտասան հազար Հրէայք գնան առ նա՝ տանելով զԳիրս ծննդոց:

Կամեցաւ կայսրն Հերակլ կռուել ընդ Մահմետի: Եկն այր մի առ նա և եբեր նմա զգիրս Հեմինդրոսի և Գեմինդ-

րոսի, յորս կայր գրեալ, թէ 240 ամ տուեալ է նոցա իշխանութիւն:

Արճէշ առաւ 'ի Տաճկաց:

615 Վիրք 'ի բաց կացին 'ի միաբանութենէ Հայոց:

Սաստիկ սով և սուր յԱղուանս:

Տէր Վիրոյ կաթողիկոս:

Տէր Կոմիտաս մեծացոյց զվկայարան սրբոյն Հռիփսիմեայ:

Տէր Եզր ընդարձակէ զվկայարան սրբոյն Գայիանեայ:

Ելք Տաճկաց 'ի Հայս:

Ժողով Կարնոյ քաղաքի և Եզրայ հաւանիլն:

Սով սաստիկ և հողմն քակիչ ընդ ամենայն երկիր:

637 Բարձան թագաւորք Պարսից՝ վերջինն Յազկերտ, որք տիրեցին զամս 418 թագաւորք քսանեչորք:

Տաճիկք առին զաշխարհական իշխանութիւն. զԴուին էառ Տաճիկն և 1200 կոտորեաց 'ի սուրբ Սարգսին: Պատերազմ վասն նկարեալ եկեղեցւոյ, զոր եղծ Յովհա Մայրավանեցին:

641 Շինողն Ներսէս շինէ զտաճարն սուրբ Գրիգորի՝ զզարմացուցիչն տիեզերաց, որ քակեցաւ 'ի Տաճկաց:

Երեւեցաւ խաչն Վարագայ 'ի ձեռն Թոդիկայ:

Փիլոն Տիրակացի:

Յակոբ Ուռհայեցի արար զնոր թարգմանութիւն:

Հաւատան Հոնք յԱստուած 'ի ձեռն Իսրայելի:

Անանիա վարդապետն արար անշարժ տոմար:

Գրիգոր իշխանն շինէ զԱրուճոյ եկեղեցին և տէր Ներսէս զԲագուանայն:

Հողմ սաստիկ ել 'ի Հիւսիսոյ, փլոյց զեկեղեցիս և շրջեաց զանտառս:





Երեւեցաւ աստղ մի գիսաւոր՝ նշան սովու և սրոյ և մեծի սասանութեան:

Տէր Գրիգորէս՝ Արշարունեաց եպիսկոպոս, արար զընթերցուածոց մեկնիչն, 'ի խնդրոյ Ներսեհի կամսարականի: 690

Տաճկունք բարձին զպատկերս 'ի դահեկանէ և գրով դրոշմեցին:

Արչիլ և Միհր թագաւորք Վրաց հարին զՄրուանն մերձ յԱնակոփ բերդն. իսկ Եօթնավնեան գետն տարաւ 'ի տաճկաց 23000 մարդիկ և 35000 ձիս, վասն որոյ հաբաշխծղալ և ցխէնիծղալ անին:

Հայր Սողոմոն արար զտօնականն 'ի Մաքենիս: 696

Խալթայ ծովն սառեաւ: — Զսուրբ Գրիգորի վանքն այրեցին:

Մահմետ զՍեւան էառ:

Աշոտ զԴարօնից սուրբ փրկիչն շինեաց:

Կասմ ամիրայն զհայոց իշխանսն այրեաց՝ ութ հարիւր 'ի Նախջաւան, և չորս հարիւր 'ի Խրամ: 704

Աբդլազիզ շինեաց զԴուին. Սուլիման զԴարբանդ քակեաց, և այլ շինեաց:

Համայ Հեշմայ հրամանաւ Հերթն եկեալ 'ի Հայս աշխարհագիր արար:

Սով սաստիկ և ջնջումն պատկերաց յեկեղեցւոյ:

Մահն Աշոտոյ և խաղաղութիւն:

Եղիա օրէնս եդ՝ ոչ ըմպել Տաճկի զգինի:

Յովհան Օձնեցի արար ժողով 'ի (Մանազկերտ) [1] սով սաստիկ, և Բարան զՄաքենացոյ սուրբ ուխտն այրեաց: 719

Ջրհեղեղն զՍևահոյ տարաւ:

---

[1] Այլ օր. 'ի Դուին:

Մարդամահն:

Վայոց Ձորոյ ընկղմումն:

'Ի զօրութենէ խաչին Քրիստոսի 50 բիւր տաճիկք ծովասոյզ եղեն 'ի Կոստանդնուպօլիս, և արձակեցաւ Մսլիմ 'ի Լևոնէ պատմել զփառս Քրիստոսի:

737 Վահան գողթնացի կատարեցաւ:

Զափր շինեաց զԲաղտատ քաղաք 'ի վերայ Տիգրիս գետոյ:

Շարժն ահագին, որ թուոյց զգեօղն 'ի Թափօրական լեառնոտանէն, և բազում քաղաքք և գեօղք փլան: Երկու նոր աստղ երևեցան՝ մին յարևելք և մին յարևմուտք: Երկու ամիս օդք փոշի տեղեաց թիզ մի: Եղեն ցոլմունք ահագին աստեղաց և շարժ սաստիկ:

758 Աբդլայ զերեք տարւոյ մեռածին հարկն 'ի կենդանեաց խնդրէր բռնութեամբ. և հատաւ յամենայն յաշխարհէ ոսկի և արծաթ:

Մեռեալք ութ յանկարծակի յարեան և ոչինչ խօսեցան:

Եկն մարախ բազում և կարկուտ՝ մին հինգ լիտր, և փլոյց շինուածս բազումս:

Կապիկք կատաղեցան և բազում վնաս արարին:

Երևեցաւ կին մի 'ի Բուքրայ, որ 'ի ծնէ կաթն ոչ եկեր և ոչ այլ ինչ կերակուր:

771 Ստեփանոս Սիւնեցին. տէր Եփրեմ. Անաստաս, Խաչիկ և Դաւիթ վարդապետք մեծիմաստք:

ԶԲաղինա, զԹաղին և զԱրենի կոտորեցին տաճիկք և գերեցին. զՄուշեղ, զՍամուէլ և զայլ ազատազունս հայոց կոտորեցին 'ի զաւկին:

Եւս պատերազմեցան սաստիկ մօզք և տաճիկք:





Լևոն առաքեաց առ Մահադէ զգիրս յանէսի և յամբէսի: 781

Յուռհայ գտաւ տապան մի հրէի և հազար ամաց գիր 'ի վերայ, թէ «հաւատամ որ Քրիստոս 'ի կուսէ ծնանելոց է և լոյս նորա ծագէ 'ի վերայ իմ»: Նոյնպէս և 'ի Կոստանդնուպօլիս գտաւ տապան մի մարմարեայ և գրեալ 'ի վերայ.— «զի՞նչ օգուտ է ծածկելդ զիս, զի յաւուրս Կոստանդեայ և մօր նորա Հեղինեայ արեգակն տեսանելոց է զիս»:

Պանդալեոն քահանայ գտաւ զպատմութիւն մասին Պետրոսի առաքելոյ:

Սահակ և Յովսէփ 'ի Կարնոյ քաղաքն կատարեցան: 791

Մակար կրօնաւորն դարձոյց զամիրայն:

Խաշնամահն սաստիկ և սովն ընդհանուր. մէկ օրն 3000 ոգիք մեռան 'ի Կարնոյ քաղաքն:

Եկն թշնամին յՄսկի դուռն և առան բազում քաղաքք:

Իբրէհիմ թագաւորեաց 'ի Բաղտատ:

'Ի Խառան գտան բազում կռապաշտք:

Շարժն ահագին, որ լերինքն Կողատու յիրար հասանէին. փլաւ լեառն մի և արգել զԵփրատ գետ օր մի:

Եպիկուռայ ջանայր զԱշոտ իշխանն քաղկեդոնիկ առնել. իսկ Բուրէտ վարդապետն առաքեաց զՆանան սարկաւագն իւր, որ յաղթեաց Եպիկուռայ և մեկնեաց զաւետարանն Յովհաննու:

Ապքի ամիրայ [1] զվանորայսն հայոց և զամենայն եկեղեցիս կողոպտեաց և 'ի Բաղտատ յղարկեաց զոսկին և զարծաթն:

---

[1] Այլ օր. Սուլէ ամիրայն:

821 Սմբատ Աբլաբասայ. սա է նախնին Թոնդրակեցոց աղանդին:

Յաւուրս տէր Դաւթի փարման քահանայ Կակաղեցի որոշեալ 'ի հայոց՝ 'ի Վիրս դարձոյց զԹոնդրակեցիսն, այս է Նոադն, որ կան այժմ 'ի հոռոմս:

Նոյն Անդրիանու ընկէց արտաքս քառասուն գիրկ երկայն և նոյնչափ լայն:

831 Եպուսահլ էառ զԱմուրիա, ուր կայր հազար վանք կուսից, զորս ետ զօրաց իւրոց:

Մահադի եկն 'ի հայս Թագաւորեաց. իսկ Սահակ իշխանն հարկանէ զնա և սպանանէ զօրքն, նաև զզօրավարն տաճիկ Հասան:

Լինի անձրև 40 աւր, և վիշապաձուկն մի ելանէ 'ի Կասբիական ծովէն և ուտէ զամենայն ձկունս Կուր գետոյ:

Դաւութ՝ որդի Եպուսահլայ տաճիկ եդ օրէնս քրիստոնէի ոչ բառնալ զմեռեալս և ոչ խաչ վարել, կամ ժամ հարկանել, և ոչ խոզ պահել:

Եստ Թամամ սուտ ռասուլն, և մարախ ճնճղկի չափ, որ եկն 'ի Խազրաց:

841 Նորն և Պապաքն քրիստոնեայ եղեն:

Գուրգէն՝ որդի Զաքարիա Թագաւորի, գնայ 'ի Բաղդատ հրաշագան յօրինուածովք:

Սասնեցիք զԵպուսէթ սպանին:

Երևեցաւ հուր երեք գիշեր:

Եկն անձրև, որ կեղուէր զծառս և բերէր քարինս:

Սաջոբ ամիրայն էառ զՄծխիթայ և կոտորեաց զխաչն Նունեայ:

851 Շապուհ արծրունի նահատակի 'ի Բաղդատ:



Բուղայ կալեալ զամենայն իշխանս և զազատս հայոց՝ տարաւ, զկէսն մարմնով և զկէսն հոգւով:

Զաքարիա կաթողիկոսն 'ի միում աւուր ընկալաւ զվարդապետութիւն, զքահանայութիւն, զեպիսկոպոսութիւն և զկաթողիկոսութիւն: 854

Բարձաւ վարագոյր եկեղեցեաց հոռմի:

Շարժ յաղուհացսն, որ 'ի Դուինն մեռան 'ի միում գիշերի երկոտասան հազարք:

Վասիլ կայսրն առաքեաց Աշոտ իշխանին մասն 'ի տէրունական խաչէն և գիր 'ի Փոտ պատրիարգէն:

Յիսէ՝ Շնեսայ որդին, ետ ալամ և խաչ 'ի վերայ Զաքարիա կաթողիկոսին: 871

Նիկիան եբեր 'ի հայս զհռոմայրի նշանն, և զպասհարի զոյգն, զոր բժշկեաց սուրբն Գրիգոր:

Համամ, որ և Յոհաննէս Բագրատունի, մեկնեաց զԱռակսն և եդ զվերջի գուրգայն 'ի գլուխ Սաղմոսացն:

Թագաւորեաց 'ի Հայս Աշոտ Բագրատունի յետ 434 ամաց բառնալոյ Թագաւորութեանն Արշակունեաց: 885

Եստ հայր Գադիկ, հայր Եհարոն, տէր Մաշտոց, որ 40 ամ հաց ոչ եկեր:

Շապուհ Բագրատունի պատմագիր:

Տէր Յովհաննէս կաթողիկոս պատմագիր:

901 Բարձաւ իշխանութիւնն տաճկաց և զօրացաւ Թուրքմանն Սալչուքն և Մուսէ փաղյն և Գօզլարէկն:

Երք յետուն իշխանք Սասնցիք՝ նեղեալք 'ի Թուրքաց, գնացին 'ի Կիլիկիա և Եատուծով տիրեցին սակաւ սակաւ:

Շարժ սաստիկ 'ի Թրակիա, որ պատառէր զերկիրն և զբազում եկեղեցիս կլանէր:

Եղանէր Թամթարն 'ի Դարադումայ. ասեն, թէ սպի-

տակ շուն առաջնորդէր նոցա և զմոլորեալսն հաչելով դարձուցանէր, մինչև հասին յԱրաղ։

913 Թագաւորն Սմբատ տիեզերակալ շինեաց զԱնի քաղաք, որ Թալքմանի խնամ. սա կալաւ զՍուլտանն և ծամեր ետ առնել Տաճկաց որպէս կանանց։ Կալաւ և զԴեմետրէ Թագաւորն Վրաց և զքաղում Վրացոց ձեռն խաղեաց, ուստի և Աֆխազ անուանեցան։ Զսա խաչեաց պիղծն Յուսուփ 'ի Դուին. և կատարեցաւ մարգարէութիւն Մովսէսի Խորենացւոյն, որ ասաց, «Բագրատունիքդ Թագաւորէք 'ի Դուին»։

Յետ սորա Թագաւորեաց Գագիկ արծրունի, որ ըզկղզին Աղթամար քաղաք շինեաց։

921 Թագաւորեաց Աշոտ երկաթ։

Դաւիթ և Գուրգէն իշխանք կատարեցան 'ի Դուին։ Աբաս Թագաւոր շինէ զԿարուց կաթուղիկէն և զԿարմընջաձորն, զԿապուտքարն, զԴպրավանս և զՀոռոմոսի վանս։ Սա եհար զԲէրն 'ի Կարս և զթաս գլխոյն յոսկի կալաւ և նովաւ ըմպէր գինի։

Տէր Անանիա կաթողիկոս զՍիւնեաց եպիսկոպոսն ընդ բանիւ արար և յետոյ արքեպիսկոպոս անուանեաց։

Խոսրով Անձևացեաց եպիսկոպոսն արար զմեկնութիւն Աղօթամատուցին, զոր գրէր Սահակ որդի իւր։

Շինեցան Հաղպատ և Սանահին 'ի Խոսրովանոյշ Թագուհւոյն։

981 Աստ եղև սկիզբն Թագաւորելոյ Բագրատունեաց 'ի վերայ Վրաց, զի Գուրգէն 'ի Վիրս և Սմբատ եղբայր նորա 'ի Հայս Թագաւորեցին։ Սա զԱնւոյ պարիսպն ամրացոյց և զմեծ կաթողիկէն հիմնարկեաց։

Վահրամ իշխանն զՄարմարաշէնն շինեաց։





Աստ Եղուանից պատմագիրն Մովսէս Կաղանկատուացի և Գրիգոր Նարեկացի և Ուխտանէս պատմագիր։

Դաւիթ կուրապաղատն էառ զՄանծկերտ և Գաբրիէլ որդին Զօփնդարայ եհար զՄամլան յԱպահունիս։

Շինի սուրբն Գրիգոր աննման 'ի յԱնի, որ այժմ հանգուցեալ է։ Շինի և Հաւուց Թառն 'ի Գէորգեայ իշխանէն Պեղւոյ։ 1001

Աստ Ստեփաննոս Ասողիկ պատմագիր և Արիստակէս Լաստիվերտացի և Սամուէլ հայրն Կամրջաձորոյ զտօնացուցակն յօրինէր և սուրբ հայրն Աստոմ փարագեցի ըղհումագիրն կարգաւորէր. իսկ հայրն Սիմէոն արար զԱղամագիրքն[1] հարիւր և մետասան ձայն 'ի խնդրոյ Սենեքերիմայ՝ Թագաւորին Վասպուրականի։

Տիմոթ վարդապետն արար զմեկնութիւն Արարածոյ։

Կատրամիդէ Թագուհին կատարեաց զկաթողիկէն Անոյ։

Սմբատ Մագիստրոսն շինեաց զԲջնայրն։

Շարժ սաստիկ յառաջաւորին. ընկղմեցաւ Եզնկայ 1011
ողջոյն, և մնաց միայն տունն Կիրակոսի ողորմածին։ Բազում եկեղեցիք և բերդք տապալեցան։

Հուր անկեալ յԱնտիոք այրեաց զեկեղեցի Ղուկասու աւետարանչին։

Տուղրիլ Սուլտանի սպասալարն Պրխարի էառ 'ի Հալպայ և 'ի Գանձկայ մինչ 'ի Պաղկերմն և 'ի Տրապիզոն։

Իսկ Խոսրով՝ Թագաւոր պարսից, զարմացոյց զաշխարհս իմաստութեամբ իւրով.—սա քրիստոսասէր և տօնասէր էր, եւ Թագաւոր 'ի Հայս և հնազանդեաց զՎիրս։

'Ի Տրապիզոն յաւուր Յայտնութեան հանդիսացաւ տէր

---

[1] Այլ օր. արար զԱղամ գիրքն։

Պետրոս կաթողիկոսն։ Սա շինեաց զՍուրբմարի և զՕշա-ւաքար։

Վէստն Սարգիս՝ շինող բերդից և վանորէից։

'Ի հոկտեմբերի երեքն յերեկորեայ երկինք պատառեցաւ յեզրէ յեզր և անդունդք գոչեցին, և արձակեցաւ սատա-նայ 'ի կողմանց մկրտութեան Քրիստոսի։

1031 Արեգակն խաւարեցաւ 'ի քաղոցի 13 յուրբաթու 'ի միջօրէի և արձակեցաւ սատանայ 'ի կողմանց խաչելու-թեան Քրիստոսի։

Ապիրատ իշխան երկոտասան հազար հեծելի....[1] Սա շինեաց զԿեչառուս և եհան զառումն Երևանայ։

ԶԿալափի կայսրն կուրացոյց կինն Միխայելի, և 'ի տեղն դրին քար մի և 'ի վերայ գրեալ, — «Թէ սա Թա-գաւորն խաւարի»։

1041 Սուլտան Թագաւորեաց 'ի վերայ Հայոց և Հոռոմոց և զսուրբն Պետրոս յԱնւոյ մկնիթ արար. և այս եղև սկիզ-բըն իշխանութեան տանն Դանիշմանց 'ի Կապադովկիա։

1045 Մոնոմախն եբարձ զԹագաւորութիւնն Բագրատու-նեաց, որք 10 Թագաւորք կալան զամս 160։ Այնպէս ե-հան յաշխարհէս մերմէ զկաթողիկոսն տէր Պետրոս և նըս-տոյց 'ի Սեբաստիա, և անտի և այսր ոչ եկն առ մեզ կա-թողիկոս։ Իսկ 'ի զարմէ Թագաւորացն Բագրատունեաց մնացին 'ի Վիրս և 'ի Մածնաբերդ և 'ի Նոր բերդ, որք կալան զբազում գաւառս և շինեցին բերդս բազումս։ Իսկ Մոնոմախն, որ կալաւ զԳագիկ Թագաւորն՝ ետ զիշխա-նութիւն երկրին Գրիգորոյ Մագիստրոսի, որ շինեաց զե-կեղեցին Կեչառուաց։ Սա է որդին Հոլում Վասակայ՝

[1] Պակասին բառք ինչ։



շինողին Բջնոյ, Կայենոյ և Կայծոնոյ, զոր յանդգնաս սպա-նին 'ի Սեւկեւլէ։

Աստ տիրեցին Կիլիկիոյ Ռուբինեանքն, դատ արար Աստուած զրկելոցս. զի Հոռոմն եբարձ զմեր Թագաւորու-թիւնն, իսկ Աստուած զերկիր նոցա ետ Հայոց, որք և այժմ Թագաւորեն 'ի նմա։

Յովհաննէս վարդապետ Տարոնեցի արար Պատմութիւն Բագրատունեացն հրամանաւ տէր Պետրոսի։ 1051

Բագարատ Թագաւոր Վրաց եառ զՏփխիս 'ի Ջափայ օգնականութեամբ Գագկայ Թագաւորին Կախեթոյ՝ որ-դւոյ Յովհաննէս Թագաւորին։

Բռնակալն Ալփ արսլան առեալ 'ի Կարնոյ քաղաք, որ 'ի ծագել արեգականն մարդ սպանանէր և 'ի մտանել արեւ-ընդ կուսի ննջէր։ 1061

Հոնք զԳանձակայ դաշտն կոտորեցին և Ալբ Արսլանն զԱնի գերեաց և կոտորեաց։ Սուրբ հայրն Վարդիկ եկն 'ի Սպերոյ առ Գագիկ Թագաւորն Վանանդայ և շինեաց զՎանկոյս և եդ զՔրիստոս 'ի կերպս ցաւալից աղքա-տի։ Այս Գագիկ զԿարս 'ի Հոռոմն ետ և էառ զԾամըն-դաւ և անդ կաթողիկոս ձեռնադրեաց զՎկայասէրն։

ԶՕնջել իշխանին զաչքն հանին Տաճիկք յԵրու-սաղէմ և տարեալ զաչս 'ի Հռոմ եցոյց Թագաւորացն։ Եւ ժողովեալ եօթն կոմսունք եկին և հարին զՏաճիկն և Թագաւորեցին Երուսաղէմի Մանուն, Պայմունն և Կոն-տոփրի և Տանկրի զամս 200 մինչև 'ի Սալահատին։ 1071

Միաբանեցան Թուրքն և Տաճիկն, և զազգապետն իւր-եանց եդին 'ի Բաղդատ և Խալիֆայ անուանեցին, այսինքն է՝ յետնամնայ Մահմետի։ 1081

Կոստանդին իշխանն 30 ձիաւորօք եկն 'ի Հռոմէ յԵ-

րուսաղէմ և զգեցաւ զգեստ կրօնաւորութեան, և յետոյ հարկեալ 'ի պատրիարգէն Երուսաղէմի՝ զգեցաւ զխաչ և կռուէր ընդ անօրէնս։ Եւ այս եղև սկիզբն սրբազան ազգին Փրերաց, որ ասին Եղբարք։

Իշխանքն Հայոց զօրացան 'ի Կիլիկիա և առին զԽա-ւատանէքն և զՄարաշ և զՔէհէսնի։

Գող Վասիլն էառ զՔեսուն և զՌաբան։

Թագաւորն Հայոց Կիւրիկէ և Վրաց Դեմետրէ և կա-թողիկոսն Հայոց տէր Բարսեղ գնացին առ Մելիք Շահ սուլտանն և դարձան պատուով։

Դաւիթ թագաւորն՝ որդին Կիւրիկէի շինեաց զԼօռի և զայլ երկոտասան բերդս։ Իսկ Կիւրիկէ՝ որդին Դաւ-թի, ետ ձեռնադրել Յովսեփայ Եղուանից կաթողիկոսին զտէր Բարսեղն և զերան երէցն իւր՝ զՍարգիս, ետ ձեռ-նադրել եպիսկոպոս Հաղբատայ, և յամենէ եղև ա-թոռ։ Իսկ Բջնոյ աթոռն 'ի տէր Գէորգէ եղաւ յառաջ։

1085 Սկիզբն Նոր Թուականին, որ կարգեցաւ 'ի Յովհաննէս վարդապետէ Հաղբատացւոյ, որ Սարկաւագ կոչեցաւ։ Սա արար անշարժ տոմար ըստ այլոց ազգաց։

Սուքման ամիրայն՝ Կարուց եպիսկոպոսին ուրանալ ետ, զի անչափ ոսկի խնդրէր։ Սա աղքատացոյց զաշխարհս Հայոց անչափ հարկիւ։

1094 Սկիզբն շրջանի հնգհարիւրեկին։ Սով սաստիկ և հար-կապահանջութիւն 'ի Հայս։

Փալտուն ամիրայն առաքեաց զՎասակ Պահլաւունին՝ զորդի Գրիգորի Մագիստրոսի բազում զօրօք 'ի վերայ Բա-ղաբերդոյ, որք խաբէութեամբ սպանին զՍենեքարիմ ար-քայն հայկազն և առին զերկիրն Սիւնեաց։ Եւ այն եղև սկիզբն տիրելոյ Տաճկաց 'ի վերայ նոցա։





Փռանկք անհամարք դիմեցին յարևելս օգնել քրիստո-նէից. իսկ անաստուած Ալէքսն բազումս նենգեաց նոցա։

Տան ազգք ծուռ զատիկ արարին. վասն պատառմանն խոռնի։

Երևեցաւ աստղ նիզակաձև 'ի բազում աւուրս։

Վասիլն և այլ իշխանք Կիլիկիոյ տարան աղաչանօք առ ինքեանս զտէր Գրիգոր կաթողիկոսն։ 1101

Յաւուր ծրագալուցին ոչ վառեցաւ լոյսն յԵրուսա-ղէմ, զի փռանկն զպաստաւորութիւնն կանանց էր տուեալ։

Խզրէլն էառ զԼօռի, և զՀաղբատ և զՍանահին այ-րեաց։

Թորոսն էառ զԿմուդայն և սկսաւ զօրանալ։

Շարժ եղև 'ի Խորասան, զմզկիթն և զ60,000 մարդ և-կեն 'ի վայր տարաւ։

Եսա Մարկոս ճգնաւորն 'ի լերինն Կանկռնատ 65 ամ հաց ոչ եկեր։ Սա ասաց, թէ յաճախեն չարիք մարդկան 'ի վերայ երկրի, աւերին և փակին դրունք եկեղեցեաց և Ե-րուսաղէմ դարձեալ առնու Թուրքն, որ և եղեն իսկ։

Ձմեռն 'ի մթին գիշերի[1] որոտաց սաստիկ և անկաւ հուր 1111
'ի ծովն Խլաթայ, և մեռան ամենայն ձկունք և ծովն ան-կաւ զցամաքաւ և դարձաւ յարիւն։

Սպանաւ Խզրէլն և մեռաւ Մանուչէ ամիրայն Անւոյ։

Մերժեցան 'ի հայրենեաց որդիքն Կիւրիկէի թագաւորի։

Մեռաւ Սարկաւագ Վարդապետն և Գէորգ վարդա-պետն Մեղրիկ, որ զԳրագարկն կարգն սահմանեաց. և Դաւիթ վարդապետն Ալաւկայ որդին, որ զԿանոնքն բա-ցայայտեաց։

---

[1] Այլ օր. 'ի ձմերան 'ի մթան գիշերի։

Ամբոխեցաւ Թագաւորութիւնն Թուրքաց 'ի Խորասան և դարձեալ զօրացան Տաճիկք:

Յամառն կարմիր ձիւն եւեկ չորս մատն:

Ընձրև եկն 'ի Պաղեստինէ և 'ի նմա կաթիլք արեան, և ցօղ առաւօտուն արիւն լինէր:

1121 Դաւիթ Թագաւորն Վրաց եհար զԻլղազի և զՄէ-լիքն և էառ զԴուագ, զՏէրունական և զԱնի քաղաք:

Սուլթանքն Խորասանայ Աբու-բէկ+ կոչեցան Ջէլջուկու-ղէն 'ի հետ:

Երզրումիք Ջէլէի ազգէն են, որք գնացին փախստա-կան 'ի խաղիփայ եղբօրէն իւրեանց. անուանք նոցա՝ Եբ-դլայ և Մամունայ. տարան երկու գիրք զՍեմիայն և Ըդ-Քեմիայն, և արլամով և ոսկով Թագաւորեցին յարև-մուտս:

Եպլուար եբեր 'ի Խլաթայ զոսկի նալն և եդ 'ի դրուն կաթուղիկէին Անոյ: Իսկ քաղաքացիքն բերին զԴաւիթ Թագաւորն Վրաց և բացին նմա զդուռն քաղաքին. և նա կալեալ զԵպլուար 'ի Սոնէթ առաքեաց որդովն, և զնալն ձգեաց յեկեղեցոյն և խաչ կանգնեաց:

1131 Գայ Փադլուն՝ որդի Եպլուարայ և դարձեալ առնու զԱնի:

Սով սաստիկ և սուր անողորմ:

Մասուտ՝ սուլտան Իկոնացոց եմուտ 'ի Կիլիկիա և ե-հար զնա Եստուած մծղուկաւ:

Պէմունդ արքայ՝ Անդաքու բրինձ կոչեցաւ:

Դեմէտրէ Թագաւորն եհար զՇարաւընթուր աթա-պէկն 'ի Նոր բերդին:

ԶԴմանիս և զԽունան էառ Եպուլէթ:

Եստ Պետրոս՝ Խոնդկայ որդին, և Յակոբ սքանչելին.



Իսկ Խորասու և Մարիամ 'ի Վորայրէն կային կուսու-թեամբ:

Շահրիմանն էառ զԽլաթ: Մանիլն զԽլիճ ապանն Ծածկեաց ոսկով:

Ընդ երկուս բաժանեցան կրօնիւք Տաճկունք, Շէիք և Սունիք:

Եհար Պաղտոյն Թագաւորն Երուսաղէմի զԵրաս՝ խա-լիփայն Մսրայ և էառ զամենայն գանձս տանն Ելիայ:

Շերագաւ եբարձ զխալիփայութիւնն յԵգիպտոսէ:

Շարժի Գանձակ սաստիկ: 1141

Չաւլչանտարն առնու զամուրսն Խաչենոյ խարէու-թեամբ:

Սահալադինն գունացի տիրեաց յԵգիպտոս և աւրի-նադրեաց միշտ զաւտէկապ լինել քրիստոնէից:

Եստղ գաւազանաձև երևեցաւ տասն աւր:

Դարձեալ փռանկք բիւրք բիւրոց եկին ընդ Թիւրակս 1151
յաւգնութիւն Քրիստոնէից. իսկ Մանուէլ Թագաւորն նենգեաց նոցա որպէս Ելէքսն՝ և ոչ յաջողեցան:

Տէր Գրիգորիս առնու զՀռոմկլայն և դնէ անդ զա-թոռ իւր:

Ըլտկուզ աթապէկն էառ զԵմուկ 'ի Խալանեկաց և զՍասունք 'ի Վիրգենաց:

Յակոբ՝ որդին Սալիպայ, մեկնեաց զամենայն Հին և Նոր կտակարանս:

Կալաւ Դեմէտրէ զՍալթուխն 'ի դրանն Անոյ. իսկ Դաւիթ՝ որդին Դեմետրէի եհար զՄէլիք սուլտանն և էառ զՏփխիս:

Թագաւորն Գէորգի էառ զԴուին: 1161

Շարժն տարաւ զԵզնկայ:

Տէր Ներսէս կաթողիկոսն փայլեաց յաշխարհի ամենայն առաքինութեամբ և գիտութեամբ:

Ի սուրբ խաչին քսանհինգ թիզ ձիւն եկն, և 'ի Հնդիկս 14 թիզ. և մեռան ձկունք և թռչունք և ամենայն ազգք կենդանեաց:

Մուսուլն խալիփայն հրաման ետ ընդ ամենայն երկիր եկեղեցիս շինել:

1181 Սալահատինն էառ զԵրուսաղէմ:

Գէորգի թագաւորն եբարձ զգողս և զաւազակս:

Տէր Գրիգոր զՀռոմկլայի զեկեղեցին շինեաց:

Ներսէս Լամբրոնացի՝ անյաղթ վարդապետ և թարգմանիչ գրոց:

Յորդանան տաճիկ նահատակեալ 'ի Կարնոյ քաղաքի:

ԶՍարգիս խաչենեցի խաչեցին 'ի Գանձակ:

Թամար թագուհին մեծացոյց զԶաքարիա և զՅովհաննէս, որ և Իւանէ:

Ստեփաննոս վարդապետ 'ի Կարմիր վանքն:

Իգնատիոս վարդապետ, որ զՂուկասու աւետարանն մեկնեաց 'ի Շափիրին:

Սարգիս վարդապետ, որ զԿաթուղիկէսն մեկնեաց 'ի Քարաշիթաւ:

Պապն Հռոմայ առաքեաց զվակասն և զպսակն իւր տէր Գրիգորի Հայոց կաթողիկոսի:

Ալամանաց թագաւորն գետամոյն եղև 'ի Պատուխս:

Մխիթար քահանայ յԱնի թարգմանեաց զհամարումն արեգական և լուսնի 'ի յոճիէ պարսկէ:

Էլրազի էառ զԵրուսաղէմ և նետ մի եհար 'ի ձեղունն սուրբ յարութեան:

1191 Զաքարէ և Իւանէ առին կարգաւ զաշխարհն տաճկաց 'ի Կայենոյ մինչ 'ի Բաղաբերդ՝ 'ի Սամշուլտայէ[1] մինչ 'ի Վաղարշակերտ աստուծով յաջողեալք: Ի սոյն թագաւորեաց Լևոն 'ի Կիլիկիա: Եղև ժողով 'ի Լօռի վասն վրանաւ պատարագի և ոչ հաճեցան:



Դարձեալ յԱնի ժողովեցան, և այլ ցրուեցան:

Վասակ՝ որդի Հաղբակայ և երեք որդիքն իւր՝ Պապաքն, Մկդէմն և քաջն Պռօշ՝ եկեալ 'ի Խաչենոյ, բազում արիութիւնս ցուցին յայլասեռս և բազում բարութիւնս առ ազգս քրիստոնէից: 1201

Մեռաւ Թամարն և թագաւորեաց որդի նորա Լաշայն, և ասպատակեաց յԱրճէշ և 'ի Վարագ, իսկ 'ի կողմն Պարսից մինչ 'ի Զրէհ: ԶԽամշի վանս Եզուանից կաթողիկոսացն աթոռ սահմանեցին:

ԶԻւանէ կալան 'ի Խլաթ և դարձեալ դաշամբք խաղաղութեան թողին:

Մեռաւ Մէլիք Աւաթն և նստաւ Աշրաֆն: 1211

Մեռաւ Զաքարէ, և նստաւ Շահնշահ:

Աստղ մի նիզակաձև երևեցաւ: Ջափայ և Սափատայ թաթար նոյինքն հարին զԼաշայն 'ի Կոտմոյ:

Ասա սքանչելի այրն՝ Ստեփաննոս քահանայ՝ տէր Յուսկայ որդին, և Աստուածատուր քահանայ՝ Եղբայրկանն որդի, որ յարոյց զպանեալն:

Ղփչախն եհար զԼաշայն 'ի Գանձակ: 1221

Փոխեցաւ 'ի Քրիստոս Վասակ՝ իշխանաց իշխանն և էառ զդրօշայն որդի նորա քաջն Պռօշ:

Զալալադին սուլտանն Խորասանայ գայ փախստական

[1] Այլ օր. Սամշուլդէ:

'ի Թաւթարէն և հարու զՎաչայն և զԻւանէ 'ի Կոտայն՝ անձաւահոս տանելով 'ի ձորն Գառնոյ:

Մտանէ Պռօշն 'ի Գուլէն և կոտորէ զԽորազմն և բռ-Տաճիկն:

Չանկզ ղանն սպանանէ զՋըլթան ղանն և ինքն տիրէ ուլուսին և գնէ որտու 'ի Գախաւթ:

Խորազմն էառ զԽլաթ և զբազում աշխարհս:

1231 Ռուսուդանն թագաւորէ Վրաց, իսկ Չաւքօթաղանն բաժանէ զզօրս իւր յերիս առաջս՝ 'ի Հարաւ, 'ի Հիւսիս և 'ի միջոց աշխարհիս անհուն բազմութեամբ: Հարաւայինն էառ զամենայն Հնդիկս և զծովեզերայս մինչև 'ի ձկնակերն Եթովպիա. Հիւսիսայինն գնաց զվերին կողմամբքն Կասբիական ծովուն՝ կոխելով զբազում աշխարհս՝ անցանէ ընդ Դամուր դուռ, գայ ընդ առաջ նորա կայսրն Ալամանաց և յետս նահանջէ զնա. իսկ միջինն զօրքն հարկանեն 'ի սուր սուսերի իւրեանց զՊարթևս և զՎրկանս, զՔուշանս և զԵլիմացիս, որ այժմ ասին Մըհուաք, զԽորասան, զՊարսս, զՄարս, զԱսպահան և զԱտրպատական և կարգաւ կոխելով գան 'ի Հայս, 'ի Վիրս և յԱղուանս. և 'ի միում ամի, 'ի ՈՁԵ (1236) թըւին՝ առին առհասարակ և կոտորեցին զաշխարհս, զբերդս և զքաղաքս: Իսկ թագաւորն Վրաց և իշխանք աշխարհիս փախստական լինին: Եւ յետոյ իջանէ Աւագն 'ի Կայենոյ և երթայ առ Չարմաղանն և առնէ խաղաղութիւն: Իսկ 'ի տեսանել նոցա զաշխարհս Հայոց և Աղուանից՝ հաճեցան ինքեանց տեղի հանգստեան, զամառնային եղանակն տարածանելով 'ի վերայ լերանցս Հայոց և զձմեռն տանելով յամենուհակ և յինքնաբաւ դաշտն Ռամայ, որ ասի Մուղան:



Եհար Թաթարն զՀոռոմց սուլտանն Ասուչման[1] և էառ մինչ 'ի Կեսարիա և յետոյ մինչ յԱնտալիա և աւերեաց զՍամցխէ. Թենալն և Չեկանն զանասունս աշխարհիս կրկին աւար առին: 1241

Յովսէփ վարդապետն շինեաց զգերեզման Թադէոսի առաքելոյն: 'Ի Գողթն դև մի 'ի կերպս կնոջ կին եղև առն միում զբազում աւուրս:

'Ի տօնի խաչին ձկնէ կարկուտ երեկ:

Դաւիթ Խծար ստաբանող:

Մանկու ղանն տիեզերակալեաց. գնաց առ նա Հեթում՝ արքայն Հայոց և գունդստապլ Սմբատ՝ եղբայր իւր, և պատուեցան 'ի նմանէ: 1251

Էկն մարախ և սակաւ վնասեաց:

Արղունն աշխարհգիր արար յարևելից մինչև յարևմուտս:

Շարժմամբ կործանեցաւ Երզնկայն:

Հուլաւու ղանն եկն յաշխարհս. էառ զԲաղդատ քաղաք:

Մեռաւ Բաթոյ՝ ղանն Հիւսիսոյ, և նստաւ Սարթախն քրիստոնեայ:

Փախեան երկոքեան Դաւիթ թագաւորքն Վրաց 'ի Սոնէթ. իսկ զեշխանս և զազատորդիս զամենեսին պատանդ տարան յորտուն և [illegible] անուանեցին: Բակեցին զամենայն բերդս և զամենայն ամուր եկեղեցիս զՀայոց, ըզՎրաց և զԱղուանից 'ի ձեռն Խոճաղեզ տաճկին. առին կրկին զՄոսափարղին, նաև զԱլամուտ և զամենայն միջերկրեայս մինչև յԵրուսաղէմ:

---

[1] Այլ օր. յԱսուլման:

1261 Արղունն զՎրացտունն աւերեաց. զՋալայն և զԶաքարէն սպանին:

Փնդուխտար սուլտանն Եգիպտոսի եհար զկողմնապահ Թաթարին զՔիթբուղայն 'ի Յորդանան:

Հիլաւուն կոտորեաց զամենայն Ջաթանս, որք են զանորդիս:

Երևեցաւ աստղ մի նիզակաձև զամիս չորս: Մսրցին եհար զզօրս Հայոց, սպան զԹորոս և գերեաց զԼևոն` զորդին Հեթում թագաւորին, զոր յետոյ թափեցին:

Էառ և աւերեաց Մսրցին զԱնտիոք Ասորոց:

'Ի ղանութեան Աբաղային և 'ի կաթողիկոսութեան տեառն Յակոբայ արարին ժողով 'ի Հաղբատ և 'ի Զագավանս:

'Ի Խորասան օձէ կարկուտ երեկ երկու օր. երկրորդ աւուրն զառաջին աւուրն կերաւ:

Պակուրթարն փախեաւ 'ի Սոնէթ:

'Ի Կիլիկիա շարժ մեծ եղև: Նուշաւուր և Թաւրէզ կործանեցան:

Արղունն կրկին համարեաց զաշխարհս:

Շարժ եղև 'ի Վրացտուն և բազում վնաս արար:

Մսրցին կրկին մտաւ 'ի Կիլիկիա:

Շարժ եղև 'ի Խլաթ և յամենայն սահմանս նորա:

1281 Մանկու Թամուրն և Ալփի եգիպտացին հարին զիրար 'ի Համս և 'ի Համայ:

Փոխեցան 'ի Քրիստոս աշխարհաշէն իշխանքն Պռօշ հայկազն և Սադուն Արծրունի:

Արղունն սպան զԱհմատն և ինքն ղան նստաւ: Տէր Կոմիտաս կաթողիկոս:

Սպանեաց Արղունն զՋալալայքն և զայլ բազում



նուինայս յաղագս ապստամբութեան, ընդ որս և զանմեղ թագաւորն Վրաց զԴեմետրէ սպանին:

Մեռաւ թագաւորն Հայոց Լևոն և նստաւ Հեթում: 1289

Եղև սաստիկ հացաթանգութիւն մարդոյ և անասնոյ:

Յովհաննէս աւետարանիչն հրամայէ վասն երեքամեան և երեքամսեան գործոց և սքանչելեացն Քրիստոսի, որ թէ զամենայն գրեալ էր` կարծեմ թէ և ոչ աշխարհս բաւական էր տանել: Իսկ թէ այս այսպէս է` որպէս և է իսկ, ապա զի՞նչ պարտ է ասել վասն 'ի սկզբանէ աշխարհի անցիցն անցելոց, եթէ գրեալ էին: Իսկ մեք քայլելով 'ի վերայ ժամանակագրաց անհուն զրուցաց` քաղելով զմի 'ի հազարաց և զերկուս 'ի բիւրուց, ըստ կարի հասու արարաք զձեզ` սրբազան հարք և եղբարք, կարգի թուոյ ժամանակաց, իսկ դուք աննախանձ մտօք ընկալարուք զսակաւ սատարս 'ի մէնջ` որպէս Եղիայ 'ի Սարեփթացւոյն. զի և այս ոչ 'ի մէնջ իրակերտեցաւ, այլ 'ի Հոգւոյն սրբոյ հրաշագործեցաւ, որում երկիրպագանեմք, և փառաւորեմք զանսկիզբն էութիւն և զմիասնական աստուածութիւնն Հօր անծնին և Որդոյն ծնելոյ և Հոգւոյն բղխելոյ, անպատում մեծվայելչութեանն և արարչական զօրութեանն գոհութիւն և բարեբանութիւն յամենայն արարածոց նորա և յընդհանուր շնչոց և յանշնչոց` յերկնաւորաց և յերկրաւորաց և 'ի սանդարամետականաց, յաւիտեանս յաւիտենից, ամէն:

ՀՀ Ազգային գրադարան
NL0835288
ՀՀ Ազգային գրադարան
NL0362518